Հավելված N 5
Հայաստանի Հանրապետության
տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի
2020 թվականի ----------
-ի
N ------
հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ 2017-2025 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ Ռ Ա Զ Մ Ա Վ Ա Ր ՈՒ Թ Յ Ա Ն

2020 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ

ՎԱՆԱՁՈՐ - 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հապավումների ցանկ
Ներածություն

1.Արդյունաբերություն, ՓՄՁ, Մասնավոր հատված, Տեղեկվատական կենտրոն
1.1 Արդյունաբերություն եւ մասնավոր հատված զարգացում
1.2 Փոքր եւ միջին ձեռներեցություն
1.3 Տեղեկատվական Տեխնոլոգիաներ
2. Գյուղատնտեսություն
3. Բնապահպանություն
4. Սոցիալական ոլորտներ
4.1 Կրթություն
4.2 Մշակույթ, սպորտ եւ երիտասարդության հարցեր
4.3 Առողջապահություն
4.4 Սոցիալական պաշտպանություն
5. Ենթակառուցվածքներ
5.1 Տրանսպորտ եւ ճանապարհաշինություն
5.2 Ջրամատակարարում և ջրահեռացում
5.3 Գազամատակարարում (գազիֆիկացում)
5.4 Էներգետիկա
6. Քաղաքաշինություն
7. Տարածքային կառավարում
7.1 Տարածքային կառավարում
7.2 Տեղական ինքնակառավարում
7.3 Քաղհասարակություն
7.4 Արտակարգ իրավիճակներ,
բնակչության և տարածքների պաշտպանություն
8.Ֆինանսավորում
ՀԱՎԵԼՎԱԾ 1 – ՀՀ Լոռու մարզի 2020թ.-ի գործունեության ծրագրի մոնիտորինգի տրամաբանական հենք

ՀԱՎԵԼՎԱԾ 2 - ՀՀ Լոռու մարզի 2020թ.-ի գործունեության ծրագրով նախատեսված ֆինանսավորումն ըստ միջոցառումների

ՀԱՎԵԼՎԱԾ 3 - ՀՀ Լոռու մարզի 2020թ.-ի գործունեության ծրագրով նախատեսված ֆինանսավորումն ըստ աղբյուրների

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀԶՌ	Հայաստանի զարգացման ռազմավարություն
ՀՏԶՌ	Հայաստանի տարածքային զարգացման ռազմավարություն
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ԵՄ	Եվրոպական Միություն
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՄԳ	Մոնիտորինգ և գնահատում
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՏԶ	Տարածքային զարգացում
ՏԶՌ	Տարածքային զարգացման ռազմավարություն
ՄԶՌ	Մարզի զարգացման ռազմավարություն
ՖՀ ՊԱԿԱ	Ֆրանսիայի Հանրապետության Պրովանս Ալպեր Լազուրի Ափ Ռեգիոն
ՓՄՁ ԶԱԿ	Փոքր և միջին ձեռներեցության զարգացման ազգային կենտրոն
ԳԾ	Գործունեության ծրագիր

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Լոռու մարզի 2020թ-ի գործունեության ծրագրի համար կարևորվում է մշտադիտարկումը, որն իրականացվում է մարզային վարչակազմի կողմից՝ մոնիտորինգի և գնահատման (ՄԳ) համակարգի միջոցով: ՄԳ համակարգը վերահսկում է Ծրագրի կատարումը, ամփոփում է 2020 թվականի առաջին կիսամյակի գործունեության արդյունքները՝ ՄԶՌ նպատակներին հասնելու առումով:

Մոնիտորինգի հաշվետվությունը իր մեջ ամփոփում է 2020թ-ի առաջին կիսամյակի ընթացքում նախատեսված բոլոր միջոցառումների վերաբերյալ ՄԳ համակարգից ստացված արդյունքները: Այն ներառում է հետևյալ գլխավոր բաժինները.

Տարեկան ծրագրի շրջանակներում իրականացված միջոցառումները (հավելվածներով), կատարված ծախսերը և արդյունքները:

ՀԱՎԵԼՎԱԾ 1 – ՀՀ Լոռու մարզի 2020թ.-ի գործունեության ծրագրի տրամաբանական հենք

ՀԱՎԵԼՎԱԾ 2 - ՀՀ Լոռու մարզի 2020թ.-ի գործունեության ծրագրով նախատեսված և իրականացված ֆինանսավորումն ըստ միջոցառումների

ՀԱՎԵԼՎԱԾ 3 - ՀՀ Լոռու մարզի 2020թ.-ի գործունեության ծրագրով նախատեսված և իրականացված ֆինանսավորումն ըստ աղբյուրերների

ՀԱՎԵԼՎԱԾ 4 -Մոնիտորինգի հիմնական ցուցանիշներ

1.ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ, ՓՄՁ, ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾ, ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

Արդյունաբերության, Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Այս կապակցությամբ ՄԶՌ-ով առաջարկվում է բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով մարզում բարձրացնել գործարար ակտիվությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով արտահանմանն ուղղված արդյունաբերության զարգացմանը, մասնավորապես՝ հանքարդյունաբերությանը, թեթև և սննդի արդյունաբերությանն ու ՏՏ ոլորտին:

Մարզում ոլորտի հիմնախնդիրից է հանդիսանում հանքարդյունաբերության խոշոր ձեռնարկությունների փակումը: Լուրջ խնդիրներից է նաեւ մեքենաշինության եւ թեթեւ արդյունաբերության գործող կազմակերպությունների գործունեությունը, որոնք աշխատում են հիմնականում իրենց հզորությունների 15-30% սահմաններում, ունեն վերազինման կարիք՝ նոր սարքավորումներով և տեխնիկայով, ինչպես նաև նոր շուկաների բացահայտման կարիք:

Մասնավոր հատվածի զարգացման հիմնախնդիրների վերլուծությունը ցույց է տալիս, որ մարզի տնտեսության զարգացման համար անհրաժեշտություն է ՓՄՁ-ներին ցուցաբերվող աջակցությունը, առանձին ոլորտների և տարածաշրջանների մակարդակով անցում կատարել մասնավոր հատվածի զարգացման ծրագրային միջոցառումների իրականացմանը, համայնք-մասնավոր հատված համագործակցությանը, մարզի տնտեսության մեջ նոր տեխնոլոգիաների կիրառումը, նոր համատեղ ձեռնարկությունների եւ ներդրումների ապահումը:

2020թ.-ին Լոռու մարզում Արդյունաբերություն, ՓՄՁ, մասնավոր հատված, ՏՏ եւ զբոսաշրջություն ոլորտում նախատեսված ներդրումների ծավալը կազմում է 1,55 մլրդ դրամ, որի արդյունքում ակնկալվում է ձեռնարկությունների թվի եւ 470 նոր աշխատատեղերի ավելացում: 2020թ.-ի տարեկան տվյալներով ներդրումների ծավալը կազմել է 857,50 մլն դրամ, որի արդյունքում ստեղծվել է 180 նոր աշխատատեղ:

1.1 Արդյունաբերություն եւ մասնավոր հատվածի զարգացում

ՀՀ Լոռու մարզի տնտեսության առաջատար ճյուղն է արդյունաբերությունը, որի հիմնական ուղղությունները հանքագործական և մշակող արդյունաբերություններն են (մասնավորապես՝ մետաղագործական, սննդի և թեթև, այդ թվում՝ Վանաձորում՝ թեթև արդյունաբերությունը և մեքենաշինությունը, Ստեփանավանում, Տաշիրում և Սպիտակում՝ սննդի արդյունաբերությունը):

2020 թվականի համար մարզի արդյունաբերության գերակա ճյուղերում մասնավոր ընկերությունների, ներդրողների և ֆինանսական կառույցների կողմից նախատեսվել և իրականավել է՝

- Հանքարդյունաբերություն – նախատեսվել է 120,0 մլն դրամ, փաստացի կատարվել է 127,0 մլն դրամ ներդրում:
- Մշակող արդյունաբերություն - նախատեսվել է 1,0 մլրդ դրամ, փաստացի առաջին կիսամյակում կատարվել է 57,1 մլն դրամ ներդրում:

«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ի կողմից 2020թ-ին նախատեսվել է 120.0 մլն դրամ ներդրում և մոտ 20 նոր աշխատատեղ: 2020թ.-ին ներդրումների ծավալը կազմել է 50,0 մլն. դրամ, որի արդյունքում ստեղծվել է 42 նոր աշխատատեղ:

«Սագամար» ՓԲԸ-ի կողմից 2020թ-ին կատարվել է շուրջ 77,97 մլն. դրամ ներդրում, որի արդյունքում ստեղծվել է 14 նոր աշխատատեղ:

Իրանական «Ռադ սանե Վաշամիր գրուպ» ՍՊԸ-ն 2018թ-ին մարզկենտրոնում ավարտեց գազաբալոնների և կարբոնի գործարանի կառուցումը: 2020 թվականին նախատեսվել է 1.0 մլրդ դրամի ներդրումներ և շուրջ 20 նոր աշխատատեղ: 2020թ.-ին ներդրումը կազմել է 48,5 մլն դրամ և հիմնվել է 8 նոր աշխատատեղ:

Նախատեսվում է Ստեփանավան համայնքի Կաթնաջուր համայնքում չինական ներդրողների կողմից հիմնել <<Նյու Իդա>> Ջրի շշալցման արտադրամաս, 2020թ նախատեսվում է 1,0 մլն դրամ ներդրում, որի արդյունքում կստեղծվի 20 նոր աշխատատեղ: Covid-19-ի տարածման հետ պայմանավորված, անորոշ ժամկետով աշխատանքները դադարեցվել են:

Ստեփանավանի Կաթնաղբյուր բնակավայրում «Նյու Իդա» ընկերության ներդրումային ծրագրի շրջանակներում ՍՊԸ-ի և Հայաստանի Հանրապետության (ի դեմս ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության) միջև 25.04.2019թ. կնքվել է թիվ Պ599 ընդերքօգտագործման պայմանագիրը: Պայմանագրի 3-րդ հավելվածով «Նյու Իդա» ՍՊԸ-ն ստանձնել է պարտավորություններ՝ ուղղված ՀՀ Լոռու մարզի Կաթնաղբյուր գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում առաջնահերթ խնդիրների լուծմանը: 2020թ. փետրվարի 7-ին կնքված պայմանագրով «Նյու Իդա» ՍՊԸ-ն 1.000.000 ՀՀ դրամի չափով աջակցություն է տրամադրել Կաթնաղբյուր բնակավայրի միջնակարգ դպրոցին՝ թվով 12 լուսամուտների փոխարինման նպատակով:

Աստղիկ բարեգործական հիմնադրամի կողմից Կուրթան համայնքում հիմնվել է կարի արտադրամաս: Արտադրամասը նախնական ստեղծել է նախնական 9 աշխատատեղ, ծրագրի արդյունքում ներդրումների ծավալը կազմել է 8,6 մլն դրամ դրամ:

1.2 Փոքր և միջին ձեռներեցություն

Ներդրումների աջակցման կենտրոնի կողմից ՓՄՁ աջակցության ծրագրերի շրջանակում 2020 թվականին կատարվել է.

- ❖ ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական աջակցության ծրագիր -5,2 մլն դրամ (1շահառու)
- ❖ Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման 3-րդ միջոցառում-336,4 մլն դրամ (42 շահառու)

Զբաղվածության մարզային գրասենյակների միջոցով 2020թ-ին իրականացվել են գործատուներին աջակցման մի շարք ծրագրեր՝ ավելի քան 242,3 մլն դրամ արժողությամբ, այդ թվում՝

- ❖ Աշխատաշուկայում անմրցունակ անձանց փոքր ձեռնարկատիրական գործունեության աջակցության տրամադրում:
- ❖ Աշխատաշուկայում անմրցունակ անձանց աշխատանքային ունակությունների և կարողությունների ձեռքբերման համար միանվագ փոխհատուցում գործատուին:
- ❖ Սեզոնային զբաղվածության խթանման միջոցով գյուղացիական տնտեսությանն աջակցության տրամադրում:

ՄԱԿ-ի մարդկային անվտանգության հիմնադրամի (UNDP) միջոցներով <<Մարդկային անվտանգության բարելավումը Հայաստանի համայնքներում>> ծրագրի շրջանակներում Ալավերդի Համայնքում 2 ՓՄՁ սուբյեկտների տրամադրվել է 5,4 մլն դրամի ֆինանսական աջակցության: Ծրագրի արդյունքում Ալավերդի համայնքումհիմնվել է Պանրի և պլաստիկ թափոնների արտադրամաս:

1.3 Տեղեկատվական Տեխնոլոգիաներ

Մասնագիտական կարողությունների զարգացում

2020թ-ի առաջին կիսամյակում ՎՏԿ-ում իրականացվել կամ մեկնարկել ու ընթանում են (այդ որում, համավարակային իրավիճակով պայմանավորված՝ նաև հեռավար ձևաչափով) 4 մասնագիտական դասընթացներ, ընդհանուր՝ 46 մասնակիցներով և հետևյալ ուղղություններով.

- ❖ WEB ծրագրավորման հիմունքներ (1 խումբ, 1 փուլով),
- ❖ Java Script (1-ին փուլ, 1 խումբ),
- ❖ C# (1-ին փուլ, 1 խումբ),
- ❖ Adobe Illustrator (1 խումբ)

ՁԻՀ-ի և ՀԱՊՀ-ի միջև ստորագրված հուշագրի շրջանակում շարունակվում են Պոլիտեխնիկական համալսարանի որոշ դասընթացների և պրակտիկաների իրականացումը ՎՏԿ-ում:

Հայաստանում Yandex ընկերության Ծրագրավորման դպրոցի շրջանակում 9-ից 11-րդ դասարանների աշակերտներից կազմված 3 խմբերում իրականացվող դասընթացներին մասնակցել է 40 աշակերտ:

ՎՏԿ «Տեխնոլոգիական դպրոց»-ի դասընթացներին, որոնց մասնակիցները սովորում են ծրագրավորման հմտություններ, ինժեներական 3D մոդելավորում, ինչպես նաև ստանում գիտելիքներ տեխնիկական անգլերեն, տրամաբանութուն և մաթեմատիկա առարկաներից, մասնակցում է 10-ից 16 տարեկան 72 աշակերտ: Հունիսի 2-ին տեղի է ունեցել «Տեխնոլոգիական դպրոց»-ի վկայականների հանձման արարողությունը, որը մեկնարկել էր 2019թ. նոյեմբերին:

Հունիսի 8-ին մեկնարկել են ՎՏԿ «Ամառային դպրոցի» առցանց դասընթացները: 2020թ-ի հունիսի 8-ից օգոստոսի 15-ը ներառյալ կկազմակերպվի ամառային դպրոց՝ 10-ից 18 տարեկան դպրոցականների համար: 70-ից ավել երեխա մասնակցում են 10 շաբաթ տևողությամբ հագեցած ծրագրերին:

Ձեռնարկությունների ինկուբատոր հիմադրամի, Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի և Լոռու մարզպետարանի կրթության վարչության նախաձեռնությամբ, հաշվի առնելով ստեղծված իրավիճակում անընդհատ կրթվելու և նոր գիտելիքներ ստանալու անհրաժեշտությունը, իրականացվում են հեռավար դասընթացներ Լոռու մարզի դպրոցականների համար: Մարզի դպրոցներից հեռավար դասընթացներին մասնակցել են Վանաձորի թիվ 20 դպրոցի 6-ից 9-րդ դասարանի աշակերտները: Կողմերի համագործակցության շրջանակում կազմակերպված «Computer science» ծրագրի ներքո մայիսի 8-ից մինչև մայիսի 30-ը իրականացվել են նաև հեռավար դասընթացներ՝ Լոռու մարզի թվով 21 դպրոցների աշակերտերի հետ:

Բիզնես զարգացում և աքսելերացիա

Շարունակելով աջակցել տարածաշրջանի կայուն զարգացմանը, օգնելով սկսնակ և գոյություն ունեցող ընկերություններին, տեխնոլոգիական թիմերին իրենց գաղափարները վերածել հաջողակ բիզնեսի, ինչպես նաև աջակցել առաջատար հայաստանյան և միջազգային SS և Բարձր տեխնոլոգիաների ոլորտի ընկերություններին՝ իրենց գործունեությունը ծավալել Վանաձորում՝ հաշվետու ժամանակաընթացում կատարվել են հետևյալ աշխատանքները.

Անձնակազմը համալրելու և ընկերությունները զարգացնելու նպատակով ՎՏԿ-ում գործող ՎանԱյԹի և Հայ Թեք Գայթվեյ ընկերությունների հետ կազմակերպվում են մասնագիտական դասընթացներ, որոնց հաջողությամբ ավարտող մասնակիցները կարող են աշխատանքի անցնել նշված ընկերություններում:

Երկարաժամկետ կտրվածքով որակյալ կադրերով ապահովելու նպատակով ԱրխիԴաչ ընկերության հետ համատեղ իրականացվում է Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկ Համալսարանի Վանաձորի մասնաճյուղի Շինարարության ամբիոնի ծրագրերի փոփոխություն՝ ըստ ժամանակակից եվրոպական ստանդարտների պահանջների:

ՎՏԿ շենքում գործում է նաև Համատեղ աշխատանքային տարածք, որտեղ նորարար բիզնես գաղափարով հանդես եկած սկսնակ թիմերի հետ տարվում են ինկուբացիայի և աքսելերացիոն գործընթացներ: Ներկայումս կենտրոնում իրենց գաղափարի վրա են աշխատում 4 թիմեր, որոնք ամենօրյա խորհրդատվական ծառայություններ են ստանում ՎՏԿ-ի մասնագետների կողմից:

ՎՏԿ-ում գործող բոլոր ընկերությունների համար տրամադրվում է անձնակազմը համալրելու աջակցություն: Մասնավորապես՝ հաշվետու ժամանակահատվածում նոր աշխատակիցներով են համալրվել «Թիմզ» ՍՊԸ, «ՎանԱյԹի», «Արխիդաչ», «Արդեսք» և «Ապոլլո Էքսպրես» ընկերությունները:

Վանաձարում իրենց գործունեությունը ծավալելու մտադրություն ունեցող 3 թիմեր և ընկերություններ անցել են Մարզային համաֆինանսավորվող դրամաշնորհների մրցույթի եզրափակիչ փուլ, որոնց հետ Ձեռնարկությունների Ինկուբատոր հիմնադրամը իրականացրել է երկշաբաթյա առցանց սեմինարներ և դասընթացներ:

Հաշվետու ժամանակահատվածում ՎՏԿ ներգրավված ընկերությունների և կազմակերպությունների թիվը 12-ն է, աշխատատեղերի թիվը՝ շուրջ 170:

2020 թվականին Վանաձորի տեխնոլոգական կենտրոնի գործունեությունն իրականացվել է «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի սեփական ֆինանսական միջոցների հաշվին: Այլ աղբյուրներից ֆինանսավորում չի տրամադրվել:

1.4 Զբոսաշրջություն

2020թ.-ին նախատեսված են ծրագրեր էկոտուրիզմի զարգացման ուղղությամբ դեպի պատմամշակութային կոթողներ տանող ճանապարհների բարեկարգման, զբոսաշրջային երթուղիների մշակման, հյուրատների և այլ ենթակառույցների ստեղծման աշխատանքներ:

Ներդրումային ծրագրերի իրականացման արդյունքում կյանքի կկոչվեն մարզպետարանի եւ մասնավորի հետ համատեղ մշակված ծրագրեր՝ ուղղված նոր հյուրատների ստեղծմանը, զբոսաշրջային երթուղիների մշակմանը:

Ընդհանուր առմամբ 2020թ-ին զբոսաշրջության բնագավառում ներդրումների ծավալը կազմել է 83,0 մլն դրամ:

2020թ-ին գործարկվեց Ալավերդի համայնքում Մենձ Էր քարանձավային տուրիզմի կենտրոնը, որի ներդրումների ծավալը կազմում է շուրջ 40.0 մլն դրամ:

2020թ-ին գործարկվեց նաև ԵՄ համաֆինանսավորմամբ ՀՀ Լոռու, Արմավիրի եւ Սյունիքի մարզերում իրականացվող «Տարածաշրջանային ՓՄՁ-ների մրցունակության խթանումը» ծրագիրի ենթակառուցվածքային բաղադրիչի շրջանակներում ՀՀ Լոռու մարզում 2019թ հիմնված «ճամփեզրյա կայանը»: Այն տարածաշրջանային տնտեսական զարգացմանն ուղղված բազմաֆունկցիոնալ կառույց է: Ներդրումների ծավալը կազմել է 15.0 մլն դրամ և ստեղծվել է 9 նոր աշխատատեղ: Կայանի կողմից հետագաում կարող են կազմակերպվել նաև տեղական ապրանքների ցուցահանդեսներ, տոնավաճառներ, փառատոններ, վարպետաց դասեր և այլ միջոցառումներ՝ տարածաշրջանի գրավչությունները և տեղական արտադրանքը ներկայացնելու և առաջ մղելու նպատակով:

ԵՄ-ն բիզնեի համար ՀՀ-ում նորարական զբոսաշրջության և նորագույն տեղնոլոգիաների զարգացում ծրագիր շրջանակներում 6 տնտեսվարողի տրվել են շուրջ 8000 ական Եվրո դրամաշնորհ:

2020թ.-ին Վանաձոր, Ալավերդի, Լոռի Բերդ համայնքների կողմից մշակվել են զբոսաշրջության խթանմանն ու զարգացմանն ուղղված ծրագրեր, որոնք կյանքի կկոչվեն ներդրումների առկայության դեպքում:

2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսության բնագավառում 2020թ-ին նախատեսված ներդրումների ծավալը կազմել է 4.5 մլրդ դրամ, տարեկան տվյալներով այն կազմում է 5,7 մլրդ դրամ :

Պետական օժանդակության ծրագրերի շրջանակներում տրամադրվել են՝

❖ «Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսական տեխնիկայի ֆինանսական վարձակալության՝ լիզինգի» պետական աջակցության ծրագրով 2020 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ 22 լիզինգառուի տրամադրվել է 33 միավոր գյուղատնտեսական տեխնիկա, որից՝ 12 տրակտոր, 21 այլ գյուղատնտեսական տեխնիկա, լիզինգի գումարը կազմել է 107 մլն 200 հազար դրամ

❖ «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման» ծրագրի շրջանակներում 2020 թվականի ինն ամսվա տվյալներով 2806 վարկառուի տրամադրված վարկերի գումարը կազմել է շուրջ 3.5 մլրդ դրամ:

❖ Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակներում, ըստ Էկոնոմիկայի նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի կողմից ներկայացված վերջին հաշվետվության՝ 2020 նոյեմբերի 30-ի դրությամբ հաստատվել է Լոռու մարզի շահառուների կողմից ներկայացված 12 հայտ 239.5 մլն դրամի չափով, կնքվել է 69 հումքի գնման պայմանագիր:

❖ Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության ծրագրի շրջանակներում, ըստ Էկոնոմիկայի նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գյուղական ֆինանսավորման կառույցի կողմից ներկայացված վերջին հաշվետվության՝ 2020 նոյեմբերի 30-ի դրությամբ հաստատվել է Լոռու մարզի շահառուների կողմից ներկայացված 4 հայտ՝ 13.6 մլն դրամի չափով, որոնց շրջանակներում ձեռք է բերվել 6 միավոր սարքավորում:

❖ «Փոքր և միջին «Խելացի» անասնաշենքերի կառուցման կամ վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման պետական աջակցության» ծրագրի շրջանակներում 2020 թվականի դեկտեմբերի 25-ի դրությամբ կնքվել է 4 պայմանագիր, կառուցվել է 2 անասնաշենք, փոխհատուցման գումարը կազմել է 17,5 մլն դրամ:

❖ «ՀՀ-ում խաղողի, ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների և հատապտղանոցների հիմնման համար պետական աջակցության» ծրագրով առկա է 2 շահառու, ներդրվել է 5,04 հա ազնվամորու ինտենսիվ այգի, փոխհատուցման գումարը կազմել է 43,7 մլն դրամ:

❖ «Գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագրի իրականացման համար պետական աջակցության» ծրագրի շրջանակում Լոռու մարզում 2020 թվականի գյուղատնտեսական տարվա համար ապահովագրվել են դեղձի և խնձորի այգիները և հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունները՝ կարկուտ և հրդեհ (եթե հրդեհի ռիսկը կիրառելի է) ռիսկից: Ապահովագրված այգիների և ցանքատարածությունների մակերեսը կազմել է մոտ 480 հա: 2020 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ Լոռու մարզում տրամադրվել է 65 ապահովագրական հատուցում՝ դրամի 23.0 մլն չափով:

Մարզի անասնաբուժական ծառայությունների կողմից պետական բյուջեյի միջոցներով, իրականացվում է գյուղատնտեսական կենդանիների անասնահամաճարակային հիվանդությունների դեմ պայքարի կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումներ: Ներդրման գումարը կազմել է 170 մլն դրամ:

«Լոռի» ՋՕԸ-ի կողմից ոռոգման համակարգի վերանորոգման և գարնան նախապատրաստական աշխատանքների վրա կատարվել է 21,2 մլն դրամի ներդրում:

Ջրային պետական կոմիտեի միջոցով ոռոգման համակարգերի վերանորոգում հրատապ ծրագրով իրականացվել է 18,9 մլն. դրամի աշխատանք:

«Բույսերի պաշտպանություն» միջոցառումների շրջանակներում՝ մկնանման կրծողների դեմ քիմիական պայքարի աշխատանքներն իրականացնելու համար մարզին հատկացված 147.2 լ «Բրոմադիալոն» տեսակի մկնասպան թունանյութը ներկրվել է մարզ և բաշխվել «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2020 թվականի աշնանը ՀՀ Լոռու մարզի առավել վարակված 1840 հեկտար տարածության վրա կատարված մոնիթորինգի արդյունքների հիման վրա ընդգրկված համայնքներին:

Ներ է դրվել շուրջ 850 հազար դրամ:

Սուբվենցիոն ծրագրերով մարզի Լոռի Բերդ համայնքում տեղադրվել են 9 հակակարկտային կայաններ 18,9 մլն դրամ արժեքով: Լեռնապատ, Վահագնի և Լոռի Բերդ համայնքները ձեռք են բերել գյուղատնտեսական սարքավորումներ ընդհանուր արժեքով 27,9 մլն. դրամ արժեքով: Ախթալա, Սարահարթ, Լուսաղբյուր համայնքներում և Աթան բնակավայրում իրականացվել են ոռոգման համակարգերի կառուցման աշխատանքներ ընդհանուր արժեքով 72 մլն 321 հազար դրամ: Ընդհանուր առմամբ ներ է դրվել 119 մլն 192 հազար դրամ:

«Բոզոյան» ՍՊԸ–ի կողմից շարունակվում են իրականացվել խոզաբուծական տնտեսության կառուցման աշխատանքները՝ 500 գլուխ խոզամոր տարողությամբ: Ներդրումների ծավալը կազմել է 160 միլիոն դրամ, նախատեսվում է 40-50 աշխատատեղերի ստեղծում:

Մեծավան համայնքի Ձյունաշող բնակավայրում «Աբսալյուտ օրգանիկ» ՍՊԸ կառուցում է կաթի վերամշակման և սպանդի արտադրամասերով համալրված անասնաբուծական համալիր, ներդրման գումարը կազմել է 20 մլն. դրամ, կստեղծվի 12 աշխատատեղ:

<<Անասնաբուծության զարգացում հարավ-հյուսիս>> ծրագիրի շրջանակներում համայնքներում իրականացվել է արոտային ենթակառուցվածքների կառուցում և վերամշակման ձեռնարկությունները սարքավորումներով վերազինում: Ներդրումները կազմել են 147 մլն. 415 հազար դրամ:

Սպիտակի թռչնաբուծական ֆաբրիկայում կառուցվում է ինկուբատորային արտադրամաս և արևային էներգիայի ստացման համակարգ, ներ է դրվել 520 մլն. դրամ, կստեղծվի:

Մարզի Քարաձոր, Տաշիր և Վանաձոր համայնքներում կառուցվել է թվով 4 սպանդանոցներ: Ներդրման գումարը կազմել է ընդամենը՝ 77 միլիոն դրամ, որից Քարաձոր համայնքում 40 մ դրամ, Մեդովկա բնակավայրում՝ 20 միլիոն և Տաշիր քաղաքում 10 միլիոն և Վանաձորում 7 մլն. դրամ:

«ԵՄ կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում» (EU-GAIA) ծրագիրի մարզի համայնքներին անվճար տրամադրվել է հատիկաընդեղենային մշակաբույսերի սերմացուներ 15 համայնքի (սոյա, սիսեռ, ոլոռ, ոսպ)՝ ընդամենը 9150 կգ և 10 միավոր գյուղատնտեսական մինի տրակտորներ: Ներդրման գումարը կազմել է ընդամենը՝ 11,8մլն. դրամ, որից մինի տրակտորներինը՝ 8,5 մլն. դրամ. սերմացուինը՝ 3 ,3մլն դրամ:

«Ստադի Ստուդիո» ՍՊԸ-ի կողմից Լոռու մարզի թվով 41 համայնքների տրամադրվել 879 տոննա վրացական արտադրության ազոտական պարարտանյութ: Ներդրման գումարը կազմել է 114 մլն դրամ:

«Աստղիկ» բարեգործական հիմնադրամի կողմից Հարթագյուղ համայնքում իրականացվել է 50 հա ոսպի, սիսեռի և կորնգանի ցանքս, ներ է դրվել 10,8 մլն. դրամ:

«Աստղիկ» բարեգործական հիմնադրամի կողմից Կուրթան համայնքում մեղվաբուծությունը զարգացնելու նպատակով ներ է դրվել 1,5 մլն. դրամ:

ՄԱԶԾ-ԳԷՀ փոքր դրամաշնորհային ծրագրի շրջանակներում Գարգառ և Վարդաբլուր բնակավայրերում ոռոգման համակարգի և արևային ֆոտովոլտային կայանի կառուցման գործում ներ է դրվել 10 մլն 800 հազար դրամ:

<<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության երկրորդ>> ծրագրի շրջանակներում Գոգարան համայնքում կառուցվել է խոշոր եղջերավոր կենդանիների փարախներ, հովվատան, ջրախմոցներ: Ջրաշեն, Սարամեջ, Գոգարան, Մեծավան և Միխայելովկա համայնքներին տրամադրվել է գյուղ. մեխանիզմներ և սարքավորումներ:Ներդրումների գումարը կազմել է 300 մլն դրամ:

Սարատովկա և Տաշիր համայնքների թվով 2 ֆերմերների կողմից արտ. երկրներից ներկրել են 74 գլուխ զտացեղ տոհմային երինջներ: Ներդրման գումարը կազմել է շուրջ 110 մլն. դրամ:

Սուբվենցիոն ծրագրերի շրջանակում Լոռի Բերդ, Սպիտակ, Վահագնի, Լեռնապատ համայնքներում ներդրումների ծավալը կազմել է 122,8 մլն. դրամ:

3. ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բնապահպանության բնագավառում 2020թ-ին նախատսված ներդրումների ծավալը կազմել է 144,6 մլն դրամ, որից իրականացվել է 323,7 մլն դրամը:

Թեղուտի անտառվերականգնման ծրագրի շրջանակներում նախատեսված էր իրականացնել 31.214 հա պտղատու այգիների հիմնում, ոռոգում, մշակում և լրացում: Ծրագրի արժեքը 64 ,8 մլն. դրամ է, որն ամբողջությամբ իրականացվել է:

- ❖ ՀՀ կառավարության, UNDP և GEF միջազգային կազմակերպությունների նախաձեռնությամբ Լոռու և Տավուշի մարզերում «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը Հյուսիս-արևելյան Հայաստանի չոր լեռնային լանդշաֆտներում» ծրագիրի շրջանակներում 2020թ. ընթացքում Լոռու մարզում իրականացվել է.
- ✓ ՄԱԶԾ-ԳԷՀ Փոքր դրամաշնորհների ծրագրի հետ համատեղ ծրագիրը դրամաշնորհ է տվել <<Լոռու ուսանողների միավորում>> ՀԿ-ին Լոռու մարզի Վահագնի համայնքում էներգարդյունավետ տեխնոլոգիաների ներդրման ծրագիր իրկանացնելու նպատակով: Վահագնի համայնքի բնակիչներին տրամադրվել է 14 901 ԱՄՆ դոլար (շուրջ 7 մլն. 152 հազ. դրամ) ընդհանուր արժողությամբ 100 հատ փայտի էներգաարդյունավետ վառարաններ, որոնք 25-30 տոկոսով կրճատում են վառելափայտի օգտագործումը:
- ✓ Լոռու մարզի Մարգահովիտ, Գուգարք և Վահագնի համայքներում իրականացվել է դեգրադացված արոտավայրերի վերականգնման ծրագիր, որի շրջանակներում համայնքներին տրվել են խոտախառնուրդի սերմեր, դիզելային վառելիք, իսկ Վահագնի համայնքին տրվել է նաև անիվավոր տրակտոր: Բարելավվել և վերականգնվել են 250 հա-ից ավել դեգրադացված արոտավայրեր: Ներդրումների ընդհանուր ծավալը, ներառյալ տրակտորի արժեքը (10 մլն. 100 հազ. դրամ) կազմել է 16 մլն. 114,88 հազ. դրամ:
- ✓ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Վանաձորի անտառտնտեսության տարածքում իրականացվել է դեգրադացված անտառային էկոհամակարգերի 100 հա տարածքի կոճղաշիվային բարելավում և 50 հա տարածքի վրա՝ բնական վերաճի օժանդակում հարթակների և ցանքսի միջոցով: Ջիլիզայի անտառտնտեսության տարածքում իրականացվել է 700 հա դեգրադացված անտառային էկոհամակարգի վերականգնում՝ բնական վերաճի

օժանդակման միջոցով՝ հարթակների պատրաստում և կաղնու սերմերի ցանքս: Ընդամենը վերականգնվել է 850 հա դեգրադացված անտառային էկոհամակարգ (Վանաձոր+Ջիլիզա)՝ 122 500 ԱՄՆ դոլար (շուրջ 59 մլն. 45 հազ. դրամ) ընդհանուր արժեքով: Աշխատանքներին մասնակցել են անտառամերձ համայնքների 103 բնակիչներ:

- ✓ Գնվել է 60տ վառելիքային բրիկետ և տրվել է Արցախի Հանրապետությունից Լոռու մարզ տեղափոխված 30 ընտանիքների՝ տների ջեռուցումը ապահովելու նպատակով: Ծրագրի արժեքը կազմել է 10 688 ԱՄՆ դոլար (շուրջ 5 մլն. 472 հազ. դրամ):
- ✓ 2020թ. ընթացքում ներդրումները կազմել է 87 մլն783.88 հազ դրամ:

❖ «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամը Լոռու մարզում 2020թ. ընթացքում իրականացրել է.

- ✓ Անտառտնկման աշխատանքներ Ազնվաձոր համայնքի 42,1 հա, Պրիվոլնոյե համայնքի 29.82 հա, Ուռուտ համայնքի 16.2 հա համայնքային տարածքներում:
- ✓ Բովաձոր համայնքի 39.14 հա նտարածքում նախորդ տարի հիմնադրված անտառմշակույթների լրացման աշխատանքներ
- ✓ Համայնքային ծառատունկ ծրագրի շրջանակներում մարզի համայնքներին ու տարբեր կազմակերպություններին տրամադրվել է շուրջ 2000 տնկիներ:
- ✓ Ազնվաձոր, Պրիվոլնոյե, Բովաձոր և Ուռուտ համանքներում ամբողջ տնկման համար նախատեսված տարածքները ցանկապատված են բետոնե հենասյուններով և 5 շարք ցինկապատ փշալարով: Ընդհանուր անցկացվել է 11.3 կմ ցանկապատ և օգտագործվել է շուրջ 3300 հատ հենասյուն և 4800 կգ փշալար:
- ✓ Լոռու մարզպետարանի, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի եռակողմ համագործակցության արդյունքում Մեծավան համայնքի Միխայելովկա բնակավայրի 41.4 հա և Տաշիր համայնքի 45 հա և 53.4 հա տարածքներում իրականացվել են «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի կողմից նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների լրացման և խնամքի աշխատանքներ: Ծրագրում ներգրավվել են ավելի քան 100 մարդ: Այս ծրագիրն իրականացնելու համար պետբյուջեից ներդրումը կազմել է 4.5 մլն. դրամ, իսկ հիմնադրամի կողմից շուրջ 4 մլն. դրամ:

Ընդհանուր առմամբ 2020թ. ընթացքում «Էյ-Թի-Փի» բարեգործական հիմնադրամի կողմից Լոռու մարզում իրականցվել է 88.12 հա անտառտնկման, 178.94 հա նախորդ տարիներին հիմնադրված անտառմշակույթների լրացման և խնամքի, 11.3 կմ ցանկապատման աշխատանքներ: Անտառվերականգնման ծրագրի կողմից մարզում տնկվել է 259 704 տնկի: Հիմնադրամի կողմից ներդրումները կազմել են շուրջ 80 մլն. 921.6 հազ. դրամ, պետ. բյուջեյի կողմից 4.5 մլն դրամ:

❖ Պետ. բյուջեի միջոցներով «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Լոռու մարզի անտառտնեսությունների տարածքներում իրականացվել է .

✓ Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման հակաճգնաժամային միջոցառումների 15-րդ ծրագրի շրջանակներում ՀՀ Լոռու մարզում «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Լոռու մարզի 4 անտառտնտեսությունների (Վանաձորի, Ջիլիզայի, Տաշիրի, Դսեղի) կողմից իրականացվել են 844 750 ուռենիների կտրոնների տնկման և 3.5 կմ ցանկապատման աշխատանքներ: Տնկման աշխատանքներին մասնակցել է 441 քաղաքացի: Ուռենիների տնկման աշխատանքների վրա ընդհանուր առմամբ ծախսվել է 43 մլն. 258 հազ. դրամ:

✓ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Վանաձորի անտառտնտեսություն» մասնաճյուղում 32 հա տարածքի վրա բնական վերաճին օճանդակման միջոցառումներ՝ հանքայնացում, հարթակների ստեղծում և հարթակներում կաղնու սերմերի ցանքս: Իրականացված աշխատանքների արժեքը կազմել է 2 մլն. 801.4 հազ. դրամ:

✓ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Ստեփանավանի անտառտնտեսություն» մասնաճյուղում 10 հա տարածքի վրա բնական վերաճին օճանդակման միջոցառումներ՝ հանքայնացում, 16 հա նախորդ տարիներին հիմադրված անտառկուլտուրաների խնամքի և լրացման, 0.15 հա տնկարանի ցանքսի և խնամքի և այլ աշխատանքներ: Իրականացված աշխատանքների արժեքը կազմել է 5 մլն. 220.6 հազ. դրամ:

✓ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Տաշիրի անտառտնտեսություն» մասնաճյուղում 35.2 հա նախորդ տարիներին հիմադրված անտառկուլտուրաների խնամք և լրացում: Իրականացված աշխատանքների արժեքը կազմել է 8 մլն 973 հազ. դրամ:

✓ «Հայանտառ» ՊՈԱԿ-ի «Տաշիրի անտառտնտեսություն» մասնաճյուղում 30 հա անտառտնկման աշխատանքներ: Իրականացված աշխատանքների արժեքը կազմել է 4 մլն 939 հազ. դրամ:

✓ «Վանաձորի անտառտնտեսություն» մասնաճյուղում 20 հա նախորդ տարիներին հիմադրված անտառկուլտուրաների խնամքի և լրացման աշխատանքներ: Իրականացված աշխատանքների արժեքը կազմել է 1 մլն. 102 հազ. դրամ:

❖ Լոռու մարզպետարանի բնապահպանության բաժնի հետ համագործակցության արդյունքում «Մայ Ֆորեստ Արմենիա» բարեգործական բնապահպանական ՀԿ-ն Լոռու մարզի Գուգարք և Դեբեդ համայնքներում հիմնել է անտառային կուլտուրաների տնկարաններ (համապատասխանաբար 3 հա և 1.6 հա), հետագայում մարզում անտառտնկման աշխատանքներ իրականացնելու համար: 2020թ. Գուգարք համայնքում հիմնված տնկարանում աշխատել է 10, իսկ Դեբեդի տնկարանում 6 մարդ:

❖ Ընթացիկ տարում իրականացվել է ՀՀ Լոռու մարզի Շիրակամուտ և Ջրաշեն համայնքների նախանշված համայնքային համապատասխանաբար մոտ 90 և 350 հա արոտավայրերի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում», ըստ որի ՀՀ շրջակա

միջավայրի նախարարության կողմից անտառպատման համար տվել է դրական փորձագիտական եզրակացություն:

❖ Շիրակամուտ համայնքում իրականացված անտառտնկման աշխատանքներում ներգրավել են բացառապես համայնքի բնակիչները, ընդանուր՝ 20 բանվոր: Իրականացվել է ավելի քան 50 հազ. բուսակների և 20 հազ. սերմերի տնկում և 1300 մ ցանկապատման աշխատանք: 2020թ. Շիրակամուտ համայնքում իրականացված անտառհիմնման տարածքը կազմել է մոտ 23 հա:

❖ Գուգարք տնկարանում իրականցվել է ոռոգման համակարգի նախագծում և մոնտաժ, որի ընթացքում իրականացվել է ավելի քան 900մ ոռոգման ցանցի հիմնում և պահուստային ջրի 30 մ3 տարողության ստեղծում: Տնկարանային տնտեսության կարիքների սպասարկման համար, ինչպես նաև ադմինիստրատիվ գործունեության համար Գուգարք տնկարանում կառուցվել է տնկարանային տնտեսության օժանդակ սպասարկող շինություն: Ընթացքի մեջ է գտնվում սերմերի և տնկարանի սպասարկման պահեստների շինարարությունը: Տնկարանը էլեկտրաֆիկացվել է, իրականացվել է սպասարկող ճանապարհների ընդլայնում և բարեկարգում, ինչպես Գուգարք տնկարանում այնպես էլ տնկարանից դուրս հատվածներում:

❖

4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

4.1 Կրթություն

ՀՀ Լոռու մարզում գործում են 163 պետական հանրակրթական ուսումնական հաստատություն, որից 68-ը՝ հիմնական, 80-ը՝ միջնակարգ, 11-ը՝ ավագ, 1-հատուկ դպրոց և 3 վարժարան:

Առ 14.09.2020թ.-ին մարզի դպրոցներում աշակերտ/ուսուցիչ հարաբերակցությունը կազմում է 9/1:

Առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլն ըստ ժամանակացույցի իրականացվել է «Մաթեմատիկա», «Կենսաբանություն», «Ֆիզիկա», «Աստղագիտություն» «Աշխարհագրություն», «Պատմություն», «Ինֆորմատիկա» առարկաներից, իսկ «Գերմաներեն» , «Ֆրանսերեն», «Անգլերեն», «Հայոց լեզու», «Հայ Գրականություն», «Ռուսաց լեզու», «ՀԵՊ» և «Քիմիա» առարկաների օլիմպիադաների հանրապետական փուլերը միայն 12-րդ դասարանների համար իրականացվել է ս/թ հունիսի 5-6-ը:Նշված առարկաներից հանրապետական փուլում ՀՀ Լոռու մարզից ունենք 4 1-ին կարգի, 3 2-րդ կարգի, 6 3-րդ կարգի և 3 գովասանագրի արժանացած մրցանակակիրներ:

Հանրապետական փուլի 9-11-րդ դասարանների սովորողների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլը մեկնարկել է նոյեմբերի 22-ին Հայ գրականություն, Հայոց լեզու, գերմաներեն լեզու, ֆրանսերեն լեզու , անգլերեն լեզու, ռուսաց լեզու, հայոց

եկեղեցու պատմություն և քիմիա առարկաներից: Վերջնական արդյունքում մարզը ունեցել է հանրապետական փուլի 33 մրցանակակիր, որոնցից.

ա/ 1-ին կարգի դիպլոմ – 5

բ/ 2-րդ կարգի դիպլոմ – 6

գ/ 3-րդ կարգի դիպլոմ – 8

դ/ գովասանագիր - 14

2020թ.-ի մարզի գործունեության ծրագրում ներառված են այն միջոցառումները, որոնք նպատակաուղղված են մարզի կրթական հաստատությունների կառավարման արդյունավետության և կրթության որակի բարձրացմանը:

Այդ համատեքստում իրականացվեն են հետևյալ միջոցառումները.

❖ Նախակրթարանների թիվը ավելացնելու նպատակով համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում «Դպրոցին երեխաների պատրաստվածության մակարդակի բարձրացում և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովում» ենթածրագրում ընդգրկելու համար ՀՀ ԿԳՆ ԾԻԳ է ներկայացվել 4 դպրոցի տվյալներ (Սպիտակի թիվ 4 հիմնական, Լեջանի, Պրիվոլնոյեի, Արծնիի միջնակարգ դպրոցներ), որտեղ նպատակահարմար է հիմնել նախակրթարան: Արտակարգ դրության պատճառով ուսումնասիրությունների գործընթացը ժամանակավորապես դադարեցված է:

❖ ՀՀ կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 18-ի N 1060-Ա որոշմամբ հաստատված ՀՀ կառավարության ծրագրի 1.4 կետի զ) դրույթի կատարումն ապահովելու նպատակով (բնագիտական առարկաների և մաթեմատիկայի տեսադասերի ապահովում՝ առնվազն 7-8-րդ դասարանների համար) 2020թ. հունվար, փետրվար ամիսներին անց է կացվել շուրջ է 3200 տեսադաս: Հեռավար դասեր են կազմակերպվել մարզի դպրոցների միջև, որին մասնակցել է 32 դպրոց:

❖ Ձեռնարկությունների ինկուբատոր հիմադրամը, Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնը և Լոռու մարզպետարանի կրթության վարչությունը, հաշվի առնելով ստեղծված իրավիճակում անընդհատ կրթվելու և նոր գիտելիքներ ստանալու անհրաժեշտությունը, ձեռնամուխ են եղել իրականացնելու հեռավար դասընթացներ Լոռու մարզի դպրոցականների համար: Մարզի դպրոցներից հեռավար դասընթացներ են իրականացվել Վանաձորի թիվ 20 դպրոցի 6-9-րդ դասարանի աշակերտների շրջանում:

❖ Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի, Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի և Լոռու մարզպետարանի կրթության վարչության հետ համատեղ կազմակերպված «Computer science» ծրագրի շրջանակներում մայիսի 8-ից մինչև մայիսի 30-ը իրականացրել

են հեռավար դասընթացներ:Դասընթացին մասնակցել ծրագրի շրջանակներում ստեղծված խմբակների աշակերտները:

❖ ՀՀ Լոռու մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների երթևեկող ուսուցիչների և աշակերտների 2020 թվականի փոխհատուցման համար կատարվել է վերահաշվակ /հաշվի է առնվել Նոր տիպի կորոնավիրուսային հիվանդության համավարակի տարածման կանխարգելման նպատակով հայտարարված արտակարգ դրությամբ պայմանավորված դպրոցներում դասապրոցեսի դադարեցումը/, արդյունքում՝ թվով 106 դպրոցի թվով 511 ուսուցիչների և 26 դպրոցի թվով 301 աշակերտի համար համար հատկացվել է 27571.0 հազար դրամ:

❖ Լոռու մարզում գործում է թվով 140 <<Արմաթ>> ինժեներական լաբորատորիա, որտեղ աշխատում են մոտ 123 խմբավար (խմբավարներ կան, որ երկու տեղ են խմբակ վարում): Բացված նոր 118 խմբակների խմբակավարները անցել վերապատրաստման առաջին փուլը, որի ժամանակ սովորել են «աղուէս» և «կիրայ» վիզուալ ծրագրավորման լեզուները: Նոր տիպի կորոնավիրուսային հիվանդության համավարակի տարածման կանխարգելման նպատակով հայտարարված արտակարգ դրությամբ պայմանավորված վերապատրաստումները դադարեցվել են ժամանակավորապես, սակայն խմբակի աշխատանքները շարունակվում են հեռավար:

❖ Մարզային ենթակայության 21 դպրոցներում 2020-2021 ուսումնական տարում գործում են «Համակարգչային գիտություն» առարկայի խմբակներ: Այս գործընթացը միտված է գյուղական և քաղաքային համայնքների երեխաների մոտ զարգացնել տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ գիտելիքները, խթանելու աշակերտների մոտ այդ ոլորտում մասնագիտական կողմնորոշումը:

COVID-2019 համավարակի հետ կապված խմբակները գործել են մինչև 2020թ. մարտի 16-ը: 2020-2021 ուսումնական տարվա սկզբից մեկնարկել են այդ խմբակները, որոնց անց են կացվում առկա ուսուցման ժամանակ:

❖ ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը, Հայաստանի Հանրապետությունում նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածումը կանխարգելելու և ուսումնական գործընթացի շարունակականությունն ու անընդհատությունն ապահովելու նպատակով, սույն թվականի մարտի 16-ից առաջարկել է ուսումնական գործընթացը կազմակերպել հեռավար եղանակով: Հեռավար եղանակով ուսումնական գործընթացը պատշաճ ձևով իրականացնելու և ուսուցման շարունակականությունը ապահովելու նպատակով ՀՀ Լոռու մարզային ենթակայության շուրջ 85 դպրոցներին 2020թ. առաջին կիսամյակում բաշխվել է թվով 176 պլանշետ և 50 սմարթֆոն: 2020թ. դեկտեմբերին ՀՀ Լոռու մարզպետարանի և Չեխիայի դեսպանատան հետ համագործակցության արդյունքում Վիշեգրադի միջազգային հիմնադրամի աջակցությամբ Սպիտակ համայնքի թվով 6 դպրոցի տրամադրվել է ընդհանուր

առմամբ 135 հատ BG7000G մակնիշի պլանշետ՝ սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաներին հատկացնելու համար:

Մարզի մի շարք կրթական հաստատությունների շենքային պայմանները բավարար չեն որակյալ կրթական գործունեություն իրականացնելու համար: Այդ նպատակով 2020 թվականին կատարվել են կառուցման, ամրացման, նորոգման /այդ թվում մասնակի նորոգման/ աշխատանքներ:

❖ Խնայված միջոցների հաշվին / այդ թվում բարեգործների կողմից հատկացված միջոցներ/ նորոգման աշխատանքներ են իրականացվել թվով 93 դպրոցում: Ներդրումը կազմել է 110.214 մլն.դրամ:

❖ Տանիքի նորոգման /այդ թվում մասնակի/ աշխատանքներ են իրականացվել թվով 12 դպրոցում /Վանաձորի թիվ 24, Ձորագյուղի, Սպիտակի թիվ 2, Լուսաղբյուրի, Ծաղկաբերի, Ստեփանավանի թիվ 2, Լեջանի, Ալավերդու թիվ 7, Ալավերդու թիվ 11, Լորուտի, Օձունի N2 և Մղարթի/: Ներդրումը կազմել է 10502.7 հազ դրամ:

❖ Սանհանգույցների նորոգման /այդ թվում մասնակի/ աշխատանքներ են իրականացվել թվով 29 դպրոցում / Վանաձորի թիվ 3, Վանաձորի թիվ 6, Վանաձորի թիվ 24, Վանաձորի թիվ 27, Արջուտի, Լեռնապատի, Վահագնիի, Ֆիոլետովոյի, Սպիտակի թիվ 4, Կաթնաջրի, Մեծ Պարնու, Ջրաշենի, Սարամեջի, Սարալանջի, Ստեփանավանի թիվ 6, Գյուլագարակի, Լեջանի, Արմանիսի, Ուրասարի, Ալավերդու թիվ 7, Ալավերդու թիվ 10, Ախթալայի թիվ 1, Օձունի թիվ 2, Ծաթերի, Ծաղկաշատի, Շամուտի, Ձյունաշողի, Մեծավանի թիվ 2 և Սարչապետի/: Ներդրումը կազմել է 16819.3 հազ դրամ:

❖ Ջրագծի նորոգման /այդ թվում մասնակի/ աշխատանքներ են իրականացվել թվով 8 դպրոցում /Ազնվաձորի, Դարպասի, Վահագնի, Ղուրսալի, Սարալանջի, Սարամեջի, Սարչապետի և Պրիվոլնոյեի/: Ներդրումը կազմել է 898.8 հազ դրամ:

❖ Կոյուղագծի նորոգման /այդ թվում մասնակի/ աշխատանքներ են իրականացվել թվով 3 դպրոցում /Ուրասարի, Ալավերդու թիվ 11 և Արևաձագի/: Ներդրումը կազմել է 1732.0 հազ դրամ:

❖ Պատուհանների և դռների փոխարինման /այդ թվում մասնակի/ աշխատանքներ են իրականացվել թվով 37 դպրոցում /Վանաձորի թիվ 2, Վանաձորի թիվ 3, Վանաձորի թիվ 8, Վանաձորի թիվ 12, Վանաձորի թիվ 15, Վանաձորի թիվ 16, Վանաձորի թիվ 22, Վանաձորի թիվ 23, Վանաձորի թիվ 25, Վանաձորի թիվ 27, Վանաձորի թիվ 30, Բազումի, Դեբեդի, Լեռնապատի, Մարգահովիտի, Շահումյանի, Վահագնիի, Ձորագետի, Ձորագյուղի, Սպիտակի

թիվ 2,Սպիտակի թիվ 3, Լեռնավանի, Լուսաղբյուրի, Կաթնաջրի, Սարամեջի, Սարալանջի, Ստեփանավանի թիվ 1, Ստեփանավանի թիվ 6, Ագարակի, Բովաձորի, Կաթնաղբյուրի, Հոբարձու, Սվերդլովի, Արմանիսի, Ալավերդու թիվ 7, Ալավերդու թիվ 10, Ալավերդու թիվ 12, Թումանյանի, Շամլուղի, Արևաձագի, Քարինջի, Աթանի, Ծաթերի, Ծաղկաշատի, Նեղոցի, Շամուտի, Տաշիրի թիվ 1, Մեծավանի N2, Սարատովկայի և Ձորամուտի/: Ներդրումը կազմել է 38151.6 հազ դրամ:

❖ Հատակների նորոգման /այդ թվում մասնակի/ աշխատանքներ են իրականացվել թվով 33 դպրոցում / Վանաձորի թիվ 1, Վանաձորի թիվ 3, Վանաձորի թիվ 4, Վանաձորի թիվ 6, Վանաձորի թիվ 12, Վանաձորի թիվ 15, Վանաձորի թիվ 20, Վանաձորի թիվ 22, Վանաձորի թիվ 23 Վանաձորի թիվ 24, Վանաձորի թիվ 28, Վանաձորի թիվ 30, Ազնվաձորի, Շահումյանի, Սպիտակի թիվ 2, Սպիտակի թիվ 4, Սպիտակի թիվ 8, Լեռնանցքի, Լեռնավանի, Սարամեջի , Սարալանջի, Ստեփանավանի թիվ 1, Ստեփանավանի թիվ 2, Ստեփանավանի N1 վարժարանի, Ագարակի, Սվերդլովի, Լեջանի, Ուրասարի, Թումանյանի, Շամլուղի, Արևաձագի, Ծաթերի և Տաշիրի թիվ 1/: Ներդրումը կազմել է 14272.1 հազ դրամ:

❖ Ընթացիկ նորոգման աշխատանքներ են իրականացվել թվով 52 դպրոցում /Վանաձորի թիվ 1, Վանաձորի թիվ 2, Վանաձորի թիվ 3, Վանաձորի թիվ 8, Վանաձորի թիվ 12, Վանաձորի թիվ 16, Վանաձորի թիվ 22, Վանաձորի թիվ 28, Վանաձորի թիվ 30, Ազնվաձորի, Բազումի, Լեռնապատի, Մարգահովիտի, Շահումյանի, Ձորագյուղի, Սպիտակի թիվ 2, Սպիտակի թիվ 4, Ծաղկաբերի, Կաթնաջրի, Նոր Խաչակապի, Ստեփանավանի N1, Ստեփանավանի թիվ 2, Ստեփանավանի թիվ 3, Ստեփանավանի թիվ 6, Գարգառի, Գյուլագարակի, , Լեջանի, Կուրթանի, Սվերդլովի, Արմանիսի, Պուշկինոյի, Ալավերդու թիվ 1, Ալավերդու թիվ 7, Ալավերդու թիվ 12, Շամլուղի, Արևաձագի, Դսեղի, Լորուտի, Քարինջի, Օձունի թիվ 2, Ծաղկաշատի,Կաճաճկուտի, Մղարթի, Նեղոցի, Շամուտի, Տաշիրի թիվ 1, Դաշտադեմի, Մեծավանի թիվ 1, Մեծավանի թիվ 2, Սարատովկայի, Ձորամուտի և Պրիվոլնոյեի/: Ներդրումը կազմել է 21259.6 հազ դրամ:

❖ Ջեռուցման համակարգի նորոգման աշխատանքներ են իրականացվել թվով 3 դպրոցում /Վանաձորի թիվ 6, Վանաձորի թիվ 23 և Կաթնաջրի/: Ներդրումը կազմել է 1800.9 հազ դրամ:

❖ Մարզադահլիճների նորոգման աշխատանքներ են իրականացվել Պրիվոլնոյեի դպրոցում /ներդրումը կազմել է 354.2 հազ դրամ/, իսկ Մղարթի դպրոցոցում նորոգվել է հանդիսությունների դահլիճը /ներդրումը կազմել է 980 հազ դրամ/:

❖ Մարզահրապարակ է կառուցվել Յաղդանի դպրոցում: Ներդրումը կազմել է 980.0 հազ դրամ:

❖ Ցանկապատի նորոգման աշխատանքներ են իրականացվել Թումանյանի և Արևաձագի դպրոցներում: Ներդրումը կազմել է 103.4 հազ դրամ:

❖ 2020թ. խնայողությունների հաշվին ՀՀ Լոռու մարզային ենթակայության դպրոցները ձեռք են բերել համակարգչային տեխնիկա, սպորտային և դպրոցական գույք շուրջ 8624.6 հզ դրամի:

❖ «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշմամբ «Ապահով դպրոց» ծրագրի շրջանակներում հայտարարվել է Հագվու և Մեդովկայի դպրոցների համար նախատեսվող շենքային համալիրների կառուցման աշխատանքների մրցույթները:

❖ 2020-2021թթ. «Ապահով դպրոց» ծրագրի շրջանակներում առաջարկվել է ընդգրկել ՀՀ Լոռու մարզի Մղարթի, Բլագադարնոյեի, Ջիլիզայի և Կաթնառատի դպրոցները : Տեղում ուսումնասիրվել են վերոգրյալ դպրոցների կառուցան համար առաջարկված հողատարածքները:

❖ ՀՀ Լոռու մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների 2020 թվականի բյուջեների վերաբախշման արդյունքում 13.303 մլն.դրամ է հատկացվել Վանաձորի թիվ 12 հիմնական, Ահնիձորի հիմնական, Արջուտի միջնակարգ, Կաճաճկուտի հիմնական, Գարգառի միջնակարգ, Ճոճկանի միջնակարգ և Լեռնանցքի միջնակարգ դպրոցներին /աշխատանքներն ավարտվել են/:

❖ ՀՀ Լոռու մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների 2020 թվականի բյուջեների վերաբախշման արդյունքում **162.3976** մլն.դրամ է հատկացվել թվով 22 դպրոցի /աշխատանքներն կիրականացվեն 2021 թվականին/:

Հաշվետու ժամանակաշրջանում ՄԱԿ-ի Պարենի Համաշխարհային Ծրագրի կողից իրականացվող «Դպրոցական ճաշարան» միկրոծրագրի շրջանակներում վերանորոգվել են Լեռնապատի, Վահագնիի, Օձունի թիվ 1 միջնակարգ դպրոցների ճաշարանները, սարքավորումներ են ստացել 20 դպրոց (Վանաձորի թթ. 7, 18, 22, 24, Դեբեդի, Եղեգնուտի, Լեռնապատի, Սպիտակի թթ. 1, 8, Ախթալայի թթ. 1, 2, Արևաձագի, Դսեղի, Թեղուտի, Հաղպատի, Մարցի, Մեծ Այրումի, Քարինջի, Ստեփանավանի թիվ 6, Լեռնահովիտի դպրոցներ):

❖ «Դպրոցական կայուն սնունդ» ծրագրի շրջանակներում դպրոցներում աշխատող օգնականներին տրվել է օժանդակություն սննդի տեսքով: Բացի այդ, նրանք

❖ վճարվել են նաև չաշխատած ամիսների համար: Քննարկումների և համագործակցության արդյունքում ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի աջակցությամբ մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում

նախատեսվել է նախապես պլանավորված 100 դպրոցներից 50-ի խոհանոցների,ճաշարանների և սննդի պահեստների վերանորոգման և համապատասխան գույքով վերազինման աշխատանքները և պատվիրվել է դրանց նախագծանախահաշվային փաստաթղթերը:

❖ ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի հետ համատեղ կատարվել են արևային էներգիայի կայանների տեղադրման աշխատանքներ 16 դպրոցներում, 2020թ. շահագործման են հանձնվել 3 դպրոցներ /Վանաձորի թիվ 27 հ/դ, Սպիտակի թիվ 2 հ/դ, Հարթագյուղի մ/դ/ ջերմոցների հիմնման նախագծային աշխատանքներ 5 դպրոցներում /Սպիտակի թիվ 8, Ստեփանավանի թիվ 6, Մարգահովիտի, Կուրթանի Վանաձորի թիվ 27 հիմնական/, այգիների հիմնման աշխատանքներ 6 դպրոցներում /Դարպասի, Ֆիոլետովոյի Կաթնաջրի, Շահումյանի, Ճոճկանի, Ալավերդու թիվ 12 հ/դ/, հատապտղային այգիների հիմնման աշխատանքներ 2 դպրոցներում /Լեռնանցքի մ/դ, Դսեղի մ/դ/: Ծրագրի նպատակն է աշակերտներին զինել ժամանակակից գյուղատնտեսության վերաբերյալ գործնական գիտելիքներով, որը միտված է գյուղատնտեսության կազմակերպման կարծրացած, ոչ արդյունավետության մեթոդները նոր, արդյունավետ մեթոդներով փոխարինմանը և գյուղատնտեսության ոլորտում համայնքների զարգացմանը: ՄԱԿ-ի Պարենի Համաշխարհային ծրագրի շրջանակներում նախատեսվող ջերմոցների և այգիների հիմնում ծրագրին մասնակցությունն ապահովելու համար լրացուցիչ 8.9 մլն դրամ գումար է հատկացվել թվով 9 դպրոցի:

❖ Հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատանքներ տարվել կրթության որակի բարձրացման ուղղությամբ: Այդ համատեքստում մարզային ենթակայության 103 դպրոցներում միջին, ծանր և խորը խնդիրներ ունեցող հունվար-սեպտեմբեր միջինացված ցուցանիշներով 563 աշակերտների համար իրականացվում է ներառական կրթություն:

❖ Նոր տիպի կորոնավիրուսային հիվանդության համավարակի տարածման կանխարգելման նպատակով հայտարարված արտակարգ դրության պատճառով «ԵՄ-ն հանուն երիտասարդության՝ ՍԵՅ ԵՍ. Հմտություններ աշխատանքի համար» ուսումնասիրությունների գործընթացը ժամանակավորապես դադարեցված է:

❖ «Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ում «Մեխատրոնիկա» մասնագիտության գծով 2020թ. մեկնարկել է նշված մասնագիտության գծով երկակի ուսուցման (դուալ) կրթական համակարգը:

❖ 2019թ. ուսումնասիրվել է երկարօրյա դպրոցների ստեղծման հնարավորությունը և արդեն 2020թ. փետրվար ամսից ՀՀ Լոռու մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատություններից երկարօրյա խնամքի և ուսուցման ծառայություններ իրականացվել են «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի Ղ. Ալիշանի անվան թիվ 27 հիմնական դպրոց»

ՊՈԱԿ-ում: Երկրում հայտարարված արտակարգ դրությամբ պայմանավորված՝ 2020թ. մարտից երկարօրյա խնամքի և ուսուցման ծառայությունները ժամանակավորապես դադարեցվել են:

Մարզում մեծ ուշադրություն է դարձվում դասավանդողների կարողությունների զարգացմանն ուղղված վերապատրաստման դասընթացներին: Վերջին տարիներին տարբեր կազմակերպությունների կողմից կազմակերպվում և իրականացվում են ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ, որոնք տարբերվում են իրենց բովանդակությամբ և դասավանդման մոտեցումներով:

❖ Մարզում կան շատ դպրոցներ, որոնք թերբեռնված են: Դրանք հիմնականում գյուղական կամ սահմանամերձ դպրոցներն են: Չկան անհրաժեշտ քանակությամբ, բարձրակարգ մասնագետներ, դեռևս շոշափելի թիվ են կազմում ոչ մասնագետները: Մարզի հեռավոր գյուղական համայնքների դպրոցները համապատասխան մասնագետներով համալրելու, ինչպես նաև կրթության որակի բարձրացման նպատակով ՀՀ Լոռու մարզպետարանը 2015թ-ից ի վեր համագործակցում է <<Դասավանդի՛ր, Հայաստան>> հիմնադրամի հետ: 2020թ. «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամը 2 տարի ժամկետով թվով 36 մասնակցի է գործուղել Լոռու մարզի հանրակրթական դպրոցներ, որից 24 նոր մասնակից /5-րդ սերունդ/ եւ 12 մասնակից / 4-րդ սերունդ /:

❖ 2019-2020թթ. Բրիտանական խորհրդի հայաստանյան գրասենյակը, համագործակցելով ԿԳՄՍ նախարարության հետ, «Հանուն ուժեղ հասարակության» ծրագրի շրջանակներում 2 փուլով իրականացրել է Լոռու մարզի անգլերենի ուսուցիչների վերապատրաստում անգլերենի դասավանդման և ուսուցման որակի բարելավման նպատակով: Արդյունքում իրականացվել է շուրջ 60 ուսուցիչների վերապատրաստում: Չնայած COVID-19 համավարակի պատճառով երկրում ստեղծված իրավիճակին, «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամն 2020թ. իրականացրել է գալիք սերնդի ուսուցիչների առաջնորդության ակադեմիան: Արդյունքում 2020-2021 ուսումնական տարում 2 տարի ժամկետով թվով 14 մասնակից գործուղվել է Լոռու մարզի հանրակրթական դպրոցներ:

Ինչպես նաև 2020թ. հուլիսի 13-ից 31-ը «Դասավանդի՛ր, Հայաստան» կրթական հիմնադրամի կողմից առցանց իրականացվել է աշակերտների առաջնորդության ամառային ճամբար, մասնակից աշակերտներին տրամադրվել են թվային սարքավորումներ՝ նրանց լիարժեք մասնակցությունն ապահովելու:

❖ «ՀՀ ԿԳՄՍ նախարարի և «Հայաստանի պատանեկան նվաճումներ» կազմակերպության միջև հանրակրթության ոլորտում ձեռնարկատիրական կրթության ներդրման ուղղությամբ համագործակցության մասին հուշագրի շրջանակներում վերջին տարիներին շարունակաբար իրականացվում են Լոռու մարզի դպրոցների ուսուցիչների վերապատրաստումներ: 2020թ. հոկտեմբեր ամսին, համագործակցելով «Հայաստանի պատանեկան նվաճումներ»

կազմակերպության Լոռու մարզի համակարգողի հետ, կազմակերպվել են Լոռու մարզային ենթակայության ուսումնական հաստատությունների «Տեխնոլոգիա» առարկան 6-րդ դասարաններում դասավանդող թվով 286 ուսուցիչների համար վերապատրաստման դասընթացներ՝ ««Տեխնոլոգիա» առարկայում ինտեգրվող ձեռնարկատիրական կրթության բաղադրիչը» թեմայով: GOVID19-ի համավարակով պայմանավորված՝ այդ դասընթացները իրականացվել են առցանց եղանակով: Կատարվում են նախապատրաստական աշխատանքներ 2021թ. հունվարի 20-31-ը 7-րդ դասարաններում «Տեխնոլոգիա» առարկան դասավանդող շուրջ 290 ուսուցիչների համար վերապատրաստման առցանց դասընթացներ իրականացնելու համար:

❖ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ի կողմից մշտապես իրականացվում են հանրակրթական ուսումնական հաստատությունների ղեկավար աշխատողների, դասղեկների և զինղեկների վերապատրաստման դասընթացներ «Աղետների և ռիսկերի նվազեցման կրթության հարցեր» թեմայով: 2020թ-ին վերապատրաստվել են թվով 12 աշխատակից: Ծրագիրը շարունակական է և ներկայացվել է ևս 17 աշխատակցի տվյալներ 2021թ նախատեսվող վերապատրաստման դասընթացներին մասնակցելու համար:

❖ ՀՀ Կենտրոնական բանկի աջակցությամբ Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի կողմից հանրակրթական դպրոցների մաթեմատիկայի, հանրահաշվի, հասարակագիտության, «Ես և շրջակա միջավայրը» առարկայի ուսուցիչների համար իրականացվել են վերապատրաստման դասընթացներ՝ «Ֆինանսական կրթությունը դպրոցում» թեմայով: COVID19 համավարակով պայմանավորված, վերապատրաստումներն անցկացվել են առցանց եղանակով: Այդ վերապատրաստումներն իրականացնելու նպատակով կազմվել և ամփոփ տեղեկատվություն է տրվել վերապարաստմանն ընդգրկված Լոռու մարզի Վանաձոր քաղաքի և Տաշիրի տարածաշրջանի թվով 27 դպրոցների 219 ուսուցիչների վերաբերյալ:

❖ Հայաստանում 2020 թվականին Ռուսաստանի Դաշնության Լուսավորության նախարարության աջակցությամբ տարրական դասարաններում ռուսերենի դասավանդման համար մշակված ուսումնաօժանդակ նյութերի և մասնագետների վերապատրաստման առցանց դասընթաց է իրականացվել, որին մասնակցել են նաև Լոռու մարզային ենթակայության հանրակրթական դպրոցներից ռուսերենի ուսուցիչներ:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ, Երևանում գիտության և մշակույթի ռուսական կենտրոնի և Հայաստանում ռուսաց լեզվի ու գրականության ուսուցիչների ասոցիացայի նախաձեռնությամբ, 2020թ. դեկտեմբերի 3-4-ն իրականացվել է <<Ռուսաց լեզուն և գրականությունը թվայնացման դարաշրջանում. նոր մոտեցումներ, մեթոդներ և դիդակտիկ գործիքներ Հայաստանի մանկավարժների համար>> խորագիրը կրող միջազգային

կրթական առցանց համաժողով, որին մասնակցել է մարզային ենթակայության դպրոցների շուրջ 10 ուսուցիչ:

❖ Ուսուցչի և վարչական աշխատողի՝ առարկաների դասավանդման և ուսումնական հաստատությունների վարչարարության ընթացքում ՏՀՏ-ի կիրառումը խթանելու նպատակով Կրթական ծրագրերի կենտրոն ԾԻԳ-ը «Կրթության բարելավում» վարկային ծրագրի շրջանակներում նախատեսում է անցկացնել ՀՀ Լոռու մարզի 214 ուսուցիչների վերապատրաստում: 2020թ. 1-ին կիսամյակում հավաքագրվել են մարզի 121 դպրոցներից համակարգչային հիմնական հմտություններին տիրապետող, տանը համակարգիչ և համացանցին հասանելիություն ունեցող 214 ուսուցիչների տվյալները՝ այդ վերապատրաստումներին մասնակցելու համար:2020թ. հունիս-սեպտեմբեր ամիսներին իրականացվել են այդ վերապատրաստման դասընթացները՝ MOODLE և առցանց գնահատման գործիքներ թեմայով շուրջ ուսուցչիների հետ: Մնացած ուսուցիչների վերապատրաստումը կիրականացվի 2021թ. մարտ-ապրիլ ամիսներին:

❖ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի Մասնագիտական կողմնորոշման և կարողությունների զարգացման կենտրոնի (այսուհետ՝ ՄԿԿԶԿ) կողմից մինչև 2020 թվականին անց է կացվել «Մասնագիտական կողմնորոշման աշխատանքների կազմակերպումն ու անցկացումը հանրակրթական դպրոցում» թեմայով հեռավար վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել են ՀՀ Լոռու մարզային ենթակայության թվով 2 միջնակարգ դպրոցի աշխատակիցներ:

4.2 Մշակույթ, սպորտ եւ երիտասարդության հարցեր

2020 թվականին նախապատրաստական աշխատանքներ են տարվել ՀՀ Լոռու մարզի Հաղպատի, Քոբայրավանքի, Սանահինի, Բարձրաքաշ Սուրբ Գրիգոր (գյուղ Դսեղ) վանական համալիրների ենթակառուցվածքների վերականգնման հետ կապված: Հայաստանի Հանրապետությունում նոր տեսակի կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածումը կանխարգելելու նպատակով հայտարարված արտակարգ իրավիճակով պայմանավորված՝ այդ աշխատանքների կատարումը տեղափոխվել է 2021թ:

2020 թվականի սուբվենցիոն ծրագրի շրջանակներում կառուցվել, հիմնանորոգվել և բարեկարգվել են թվով 9 համայնքային կենտրոններ, հանդիսությունների սրահներ, մշակույթի տներ, գրադարաններ, հուշարձաններ ընդհանուր 343,7մլն դրամ ներդրմամբ:

2020 թվականի սուբվենցիոն ծրագրերով՝ 158,8 մլն դրամ ներդրմամբ կառուցվել և հիմնանորոգվել է նաև 6 մարզադպրոց և մարզադաշտ:

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի հետ համատեղ, համայնքների համաֆինանսավորմամբ, մարզի 14 համայնքներում կառուցվել են մինի ֆուտբոլի մարզադաշտեր /աշխատանքներն ավարտական փուլում են/:

Վանաձորի կենտրոնական մարզադաշտի կառուցման աշխատանքները շարունակվում են:

4.3Առողջապահություն

Հաշվի առնելով մարզի առողջապահության ոլորտի ներկա իրավիճակը՝ առողջապահական ծառայությունների մատչելիության ու որակի բարձրացումը մարզում սահմանվել է որպես ՄԶՌ-ի ոլորտային գերակա նպատակ: Այս նպատակին է միտված առողջության առաջնային պահպանման մակարդակի, առաջնային և երկրորդային բուժօգնության բուժհաստատությունների շենքային պայմանների և նյութատեխնիկական բազայի բարելավման, կադրերի վերապատրաստման, տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ուժեղացման ուղղությունները:

2020թ.-ին ոլորտում կշարունակվեն իրականացվել միջոցառումները նպատակաուղղված.

- ❖ Համայնքային և մարզային մակարդակներում կառավարման, մոնիտորինգի և վերահսկողության բարելավմանը
- ❖ Ազգաբնակչությանը ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացմանը
- ❖ Բնակչության ոչ վարակիչ հիվանդություններով հիվանդացության և մահացության կրճատմանը
- ❖ Երեխաներին և դեռահասներին ցուցաբերվող բուժօգնության որակի և մատչելիության շարունակական բարձրացմանը
- ❖ Նորածինների առողջության բարելավմանը, նորածնային հիվանդացության և մահացության կրճատմանը, մայրական մահացության կրճատմանը
- ❖ Վաղ հասակի երեխաների հիվանդացության և մահացության իջեցմանը, առողջ աճի և զարգացման ապահովմանը

2020թ.-ին մարզում իրականացվել են՝

- ✓ Մարզի առողջապահական ընկերությունների կանխատեսվող բյուջեն, ներառյալ պետական պատվերը եւ վճարովի ծառայությունները) առողջապահական ընկերությունների նոր ժամանակակից սարքավորումներով հագեցում և նոր ծառայությունների ներդրում

- ✓ 2020թվականին վճարովի ծառայությունների գները սահմանել շուկայական գներին համապատասխան /ոչ պակաս սոցիալական փաթեթով մատուցված ծառայությունների գների/
- ✓ Բժշկական կադրերով համալրում՝ կազմակերպելով դինամիկ սերնդափոխություն:

- 2020թ. ընթացքում ՀՀ Լոռու մարզում իրականացվել են՝

❖ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում սեփական միջոցներով իրականացվել են վերանորոգման աշխատանքներ և ձեռք են բերել գույք, սարքավորումներ և բժշկական պարագաներ, ընդամենը 6435.5 հազ. դրամ արժողությամբ: ՀՀ ԱՆ-ի կողմից ստացել է ընդամենը 4361.0 հազ. դրամ արժողությամբ սարքավորումներ, որից թոքերի ապարատ՝ 800.0 հազ. դրամ, օքսիգեներատոր՝ 1500.0 հազ. դրամ, թթվածնային կոնցենտրատորներ /3 հատ 5լ, 5 հատ 10լ/՝ ընդամենը 1392.0 հազ. դրամ, վիրաբուժական գործիք տիտանային միջին-մեծ ամրակների՝ 300.0 հազ. դրամ, թթվածնի կոմպրեսոր՝ 250.0 հազ. դրամ, գոլորշով մաքրող սարք՝ 119.0 հազ. դրամ: ԱՄՆ դեսպանատան կողմից տրամադրվել է 2 հետազոտման սեղան՝ ընդամենը 800.0 հազ. դրամ արժողությամբ:

❖ «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում սեփական միջոցներով իրականացվել են վերանորոգման աշխատանքներ և ձեռք են բերվել գույք, սարքավորումներ և բժշկական պարագաներ, ընդամենը 36697.5 հազ. դրամ արժողությամբ, որից վերանորոգման աշխատանքներ՝ 7684.0 հազ. դրամ, թթվածնային կենտրոնացված համակարգի համար՝ 5000.0 հազ. դրամ, թվային ուլտրաձայնային համակարգ՝ 13750.0 հազ. դրամ, լիզինգով ձեռք բերված հիմնական միջոցի վճարումներ՝ 5125.0 հազ. դրամ, տեսահսկման համակարգ՝ 400.6 հազ. դրամ, 2 լվացքի մեքենա՝ ընդամենը 1674.8 հազ. դրամ և այլն: Առողջապահության նախարարության կողմից «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ին հատկացվել է ընդամենը 44218.8 հազ. դրամ արժողությամբ բժշկական սարքավորումներ և պարագաներ, որից շարժական թվային համակարգ՝ 17500.0 հազ. դրամ, շտապ օգնության մեքենա՝ 17320.0 հազ. դրամ արժեքով, թթվածնի բալոններ՝ 5750.0 հազ. դրամ, երկու ճառագայթային ռեզերկուլյատորներ՝ ընդամենը 1800.0 հազ. դրամ արժեքով և այլ սարքավորումներ:

❖ «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերել 530.0 հազ. դրամի սարքավորումներ և բժշկական պարագաներ: Առողջապահության նախարարության կողմից հատկացվել է ընդամենը 16300.1 հազ. դրամ արժեքով սարքավորումներ և բժշկական պարագաներ, որից շտապ օգնության մեքենա՝ 14200.0 հազ. դրամ, արտահագուստ՝ 1158.0 հազ. դրամ, առաջնային օգնության պայուսակ՝ 822.3 հազ. դրամ, դյուրակիր համակարգիչ՝ 119.8 հազ. դրամ և այլն:

❖ «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերվել ընդամենը 25736.5 հազ. դրամ արժողությամբ սարքեր և բժշկական սարքավորումներ, որից

որովայնային լապարասկոպ՝ 25000.0 հազ. դրամ, օֆտալմոսկոպ՝ 158.0 հազ. դրամ, տեսահսկման համակարգ՝ 420.0 հազ. դրամ, բակտերիցիդ լամպեր՝ 46.0 հազ. դրամ, հակահրդեհային ազդանշանային համակարգ՝ 52.5 հազ. դրամ և այլն:

❖ «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերվել ընդամենը 10272.9 հազ. դրամ արժողությամբ գույք, սարքավորումներ, բժշկական սարքավորումներ և պարագաներ, որից իմունոֆլյուորեսցենտային անալիզատոր՝ 700.0 հազ. դրամ, նախորդ տարիներին լիզինգով ձեռք բերված սարքավորումների վճար՝ 8287.3 հազ. դրամ և այլն: Առողջապահության նախարարության կողմից հատկացվել են 21 հատ պուլսօքսիմետր՝ ընդամենը 192.0 հազ. դրամ արժողությամբ: Անհատների կողմից հատկացվել են 294.0 հազ. դրամ արժեքի սարքավորումներ:

❖ «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերել ընդամենը 240.0 հազ. դրամ արժողությամբ գույք և սարքավորում, որից ցենտրիֆուգա՝ 90.0 հազ. դրամ, դուռ՝ 150.0 հազ. դրամ: «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ին մի շարք հիմնադրամների կողմից անհատույց տրամադրվել են գույք, սարքավորումներ և բժշկական պարագաներ՝ ընդամենը 48942.6 հազ. դրամ, այդ թվում՝ «Թեղուտ» ՓԲԸ-ի կողմից հատկացվել է շարժական ռենտգեն սարքավորում՝ ընդամենը 35030.0 հազ.դրամ արժեքով, «Թովմասյան» բարեգործական հիմնադրամի կողմից հատկացվել են կենսաքիմիական անալիզատոր՝ 6677.0 հազ. դրամ արժեքով և 12 հատ բազմաֆունկցիոնալ մահճակալ՝ 2340.0 հազ. դրամ արժեքով, «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից՝ 10 հատ բազմաֆունկցիոնալ մահճակալ՝ 1530.0 հազ. դրամ, «Ամքոր Հայաստան» բարեգործական հիմնադրամի կողմից՝ հեմատոլոգիական վերլուծիչի հավաքածու, կոագուլոմետր, լվացքի մեքենա, թթվածնային կենտրոնացված համակարգի 5 կետ, ընդամենը 3202.0 հազ. դրամ արժողությամբ, ինչպես նաև «Աստղիկ» բարեգործական հիմնադրամի և Լիլիա Աբրահամյանի կողմից գույք և բժշկական պարագաներ: Առողջապահության նախարարության կողմից հատկացվել է Բոբրով թթվածնային ծախսաչափ խոնավացուցիչով՝ 75.0 հազ. դրամ և Բոբրովի բաժակ թթվածնային ծախսաչափ խոնավացուցիչով՝ 81.6 հազ. դրամ, թոքերի արհեստական օդափոխության սարք:

❖ «Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲԸ-ն սեփական միջոցներով կատարել է վերանորոգման աշխատանքներ և ձեռք է բերել սարքավորումներ ընդամենը 1107.5 հազ. դրամ արժեքով, որից վերանորոգման աշխատանքներ՝ 352.8 հազ. դրամ, 2 սառնարան՝ ընդամենը 340.0 հազ. դրամ, 2 փոշեկուլ՝ ընդամենը 160.0 հազ. դրամ և այլն:

❖ «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք են բերել ընդամենը 993.3 հազ. դրամի գույք և սարքավորումներ, որից ՀԾ ծրագրի տեղադրում՝ 480.0 հազ. դրամ, համակարգիչ՝ 249.3 հազ. դրամ, մատնահետք կարդացող սարք՝ 189.0 հազ. դրամ և այլն:

❖ «Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք են բերել ընդամենը 261.6 հազ. դրամի սարքավորում, որից պատճենահանող սարք՝ 102.6 հազ. դրամ, սկաներ՝ 59.0 հազ. դրամ, 3 հեռահար ջերմաչափ՝ 100.0 հազ. դրամ: Առողջապահության նախարարության կողմից տրամադրվել են 5 սառնարան-պայուսակ՝ ընդամենը 373.8 հազ. դրամ:

❖ «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ին Առողջապահության նախարարության կողմից տրամադրվել է 2 դյուրակիր համակարգիչ՝ ընդամենը 239.5 հազ. դրամ:

❖ «Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն սեփական միջոցներով ընդամենը՝ 1031.0 հազ. դրամ, որից իրականացվել են ներքին հարդարման աշխատանքներ՝ 813.0 հազ. դրամ արժողությամբ, ձեռք են բերվել 2 տպիչ սարք՝ ընդամենը 218.0 հազ. դրամ:

❖ «Դսեղի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ում «Հայաստանի մանուկներ» /COAF/ բարեգործական հիմնադրամի միջոցով իրականացվել են ընդամենը 5462.2 հազ. դրամի աշխատանքներ, որից ատամնաբուժական համասարք՝ 1755.0 հազ. դրամ, կոնվեքսային տվիչ՝ 3214.0 հազ. դրամ, կոմպրեսոր՝ 145.0 հազ. դրամ 4 հեռահար ջերմաչափ՝ 110.0 հազ. դրամ, սենյակի մանրեազերծման լամպ՝ 65.0 հազ. դրամ, պլանշետ՝ 94.0 հազ. դրամ, 4 պուլսօքսիմետր՝ 40.0 հազ. դրամ և այլն: Սեփական միջոցներով իրականացվել են ջրագծի համակարգի վերանորոգում՝ 17.0 հազ. դրամ, տեսանկարահանող սարք՝ 45.0 հազ. դրամ, ընդամենը՝ 62.0 հազ. դրամ: Տարվա կտրվածքով համայնքապետարանը տրամադրել է 50.0 հազ. դրամ:

❖ «Օձունի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ը սեփական միջոցներով՝ ընդամենը 132.5 հազ. դրամ, որից տպիչ՝ 114.0 հազ. դրամ, ախտահանման ցողացիր սարքեր՝ 15.0 հազ. դրամ և այլն: Առողջապահության նախարարության կողմից տրամադրվել են առաջին բուժօգնության պայուսակներ՝ 149.5 հազ. դրամ, 4 պուլսօքսիմետրեր, 3 դիսպենսեր: «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի միջոցով տրամադրել են ընդամենը 114.6 հազ. դրամի բժշկական պարագաներ: Վորլդ Վիժն ինթերնեյշնլի կողմից հատկացվել է 2 պուլսօքսիմետր՝ 39.7 հազ. դրամ արժեքով:

❖ «Արևաձագի ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ը սեփական միջոցներով ձեռք է բերել հեռահար ջերմաչափ՝ 21.0 հազ. դրամ արժեքով, Վորլդ Վիժն ինթերնեյշնլի կողմից հատկացվել է 2 պուլսօքսիմետր: «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը հատկացրել է բժշկական նշանակության պարագաներ:

❖ «Վարդաբլուրի ԲԱ» ՀՈԱԿ սեփական միջոցներով իրականցվել են վերանորոգման աշխատանքներ՝ 500.0 հազ. դրամ և ձեռք են բերվել գույք 190.0 հազ. դրամ, ընդամենը 690.0 հազ. դրամ:

❖ «Գուգարքի ԱԱՊԿ» ՊՈԱԿ սեփական միջոցներով իրականցվել են վերանորգման աշխատանքներ, ընդամենը 931.0 հազ. դրամ, որից 1 կաբինետի վերանորոգում՝ 80.0 հազ.

դրամ, 13 ճաղավանդակ՝ 700.0 հազ. դրամ, ջեռուցման համակարգի վերանորոգում՝ 110.0 հազ. դրամ, ջրի տաքացուցիչ՝ 41.0 հազ. դրամ:

❖ «Վահագնիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ սեփական միջոցներով ձեռք են բերվել սարքեր և կատարվել են վերանորոգման աշխատանքներ ընդամենը՝ 186.7 հազ. դրամ, որից անալիզատոր՝ 89.0 հազ. դրամ, 2 տոնոմետր՝ 11.0 հազ. դրամ, մեկուսարանի կառուցում՝ 86.7 հազ. դրամ:

❖ «Ախթալայի ԱԿ» ՊՓԲԸ սեփական միջոցներով իրականացվել են ներքին վերանորոգման աշխատանքներ՝ 117.0 հազ. դրամ արժեքով, հեռահար ջերմաչափ՝ 36.6 հազ. դրամ արժեքով, ընդամենը 153.6 դրամ արժեքով:

❖ «ՈՒռուտի ԱԱՊԿ» ՊՈԱԿ ձեռք է բերել գազի կաթսա ընդամենը 320.0 հազ. դրամ, որից 120.0 հազ. դրամը սեփական միջոցներով, 200.0 հազ. դրամը տրամադրել է համայնքը:

❖ «Շնողի ԲԱ» ՀՈԱԿ համայնքապետարանը կատարել է 2899.7 հազ. դրամի ներդրում, որից գույք՝ 245.0 հազ. դրամ, վերանորոգում՝ 554.7 հազ. դրամ, դրամաշնորհ՝ 2100.0 հազ. դրամ:

❖ Կատարվել են նաև այլ ընթացիք վերանորոգման աշխատանքներ:

Առողջապահության բնագավառում ներդրումների ծավալը 2020թ.-ին կազմել է 6,32 մլրդ. դրամ:

Այսպիսով, մարզի առողջապահական ընկերություններում սեփական միջոցներով ձեռք են բերվել գույք, սարքավորում, կատարվել են վերանորոգման աշխատանքներ ընդամենը 210960.7 հազ. դրամ արժեքով, որից սեփական միջոցներով՝ 85618.2 հազ. դրամ արժեքով, այլ միջոցներով 121532.8 հազ. դրամ արժեքով, համայնքապետարանների կողմից 3809.7 հազ. դրամի աշխատանքներ:

4.4 Սոցիալական ապահովություն

ՀՀ Լոռու մարզում 01.01.2021թ. դրությամբ ընտանեկան և սոցիալական նպաստների իրավունք ունեն միջինը 13.047 ընտանիք, եռամսյակային հրատապ օգնություն ստացող ընտանիքների քանակը՝ 706, 01.01.2021թ. դրությամբ կենսաթոշակառուների թիվը՝ 50.026, հաշմանդամություն ունեցող անձանց թիվը՝ 16.386 /որից 689՝ մանկուց/:

2020թ. համար սոցիալական պաշտպանության բնագավառում բնակչության կենսաապահովման գծով նախատեսվել է շուրջ 5.4 մլրդ դրամի /այդ թվում նաև՝ ընտանեկան եւ սոց.նպաստների, հրատապ օգնության/ վճարումներ, այլ տարաբնույթ ծրագրային աշխատանքներ՝ պետական բյուջեի և միջազգային կամ տեղական ՀԿ-ների միջոցով: 2020թ. իրացվել է շուրջ 4 մլրդ 435 մլն դրամ պետական նպաստներ /ներառյալ՝ հրատապ

օգնությունները/, որից՝ շուրջ 4.23 մլրդ դրամ ընտանեկան նպաստ /ներառյալ՝ սոցիալականը/ և հրատապ օգնություն՝ ավելի քան 205.32 մլն դրամ: ՀՀ Լոռու մարզը բնակչության կենսաապահովման գծով նպաստների վճարման մեջ 2020թ. արդյունքներով տնտեսել է ավելի քան ավելի քան 861.6 մլն դրամ: Իսկ 2020թ. ընթացքում մարզի սոցիալական ծառայությունները սխալ տեղեկություններ ներկայացրած քաղաքացիներից ետ են գանձել ավելի քան 7.11 մլն դրամ:

2020թ. ՄԶՈ-ի սոցիլական ապահովության ոլորտի ուղղություններով առաջարկված ծրագրերում ոլորտային նպատակ է դիտվել բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիության ապահովումը և որակի բարձրացումը: Ծրագրերի կենսագործմանը կուղղորդվեն ՀՀ Լոռու մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կառույցների համակարգի գործունեության արդյունավետությանը և որակի բարձրացմանը միտված նյութատեխնիկական պայմանների բարելավումը /առաջարկվել է՝ «ՀՀ Լոռու մարզում սոցիալական ծառայություններ մատուցող տարածքային մարմինների շենքային պայմանների բարելավում և սոցիալական տարբեր ծառայությունների գործունեության կազմակերպում և համակարգում» թիվ 1 ծրագիրը/, Սոցիալական ապահովության բնագավառի մասնագետների շարունակական վերապատրաստումը, Սոցիալական սպասարկման բնագավառի մատչելի միջավայրի ապահովումը /առաջարկվել է՝ «Լոռու մարզի քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում թեքահարթակների կառուցում» թիվ 2 ծրագիրը/, Աջակցություն բնակարանային ապահովման քաղաքականությանը /առաջարկվել են «Զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովում» թիվ 3 ծրագիրը/:

Մարզի խոցելի բնակչության սոցիալական աջակցությունը ընդգրկում է այն աշխատանքները, որոնք ընթանում են երեխաների, տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում:

2020թ. սոցիալական ծառայությունների մատչելիությունն ու որակը բարձրացնելու համար անհրաժեշտ է ընդլայնել սոցիալապես խոցելի խմբերին ուղղված աջակցության ծրագրերը, մասնավորապես բարելավել կարիքավոր ընտանիքների, անօգնական տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց և գործազուրկների պաշտպանվածությունը: Բազմամյա ծրագրերի իրականացման համար նախատեսվել են իրականացնել ընդգրկուն աշխատանքներ, որոնցում կարևորվում է նաև սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների շարունակական աջակցության ցուցաբերումը:

Պետությունը ուղղորդված և կանոնակարգված աշխատանքներ է իրականացնում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի կայացման ուղղությամբ, որը ՄԶԳ ծրագրով նախատեսված աշխատանքներից է, որի իրականացմամբ ՀՀ Լոռու մարզում արմատապես կլուծվի այդ կառույցների շենքային պայմանների բարելավման հիմնախնդիրը:

Սոցիալական պաշտպանության վարչարարության ծրագիրը Հայաստանի սոցիալական պաշտպանության ոլորտի կառավարման բարեփոխումների առանցքային ծրագիրն է: Այդ ծրագրի շրջանակներում 2020թ. պետք է շահագործման հանձնվեր Ստեփանավանի համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնը, սակայն աշխատանքները Համավարակի, ապա՝ պատերազմի պատճառով փոխադրվեց հաջորդ տարի: ՀՀ Լոռու մարզում արդեն իսկ գործում են Վանաձորի և Տաշիրի սոցիալական ծառայությունների համալիր կենտրոնները: Այս կենտրոնների կարևորագույն նպատակներից է մեկից ավելի կարիքներ ունեցող շահառուների տարբեր սոցիալական ծառայությունների տրամադրումը միևնույն վայրում: Ալավերդիում 2020թ. տարեվերջին վերսկսվեց Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի շենքի շինարարությունը, որը նախատեսված է շահագործել 2021թ. վերջին:

ՀՀ Լոռու մարզի 2017-2025թթ. զարգացման ռազմավարության իրականացման համար 2020թ. գործունեության ծրագրով իրականացվող աշխատանքներում ներգրավված են ծերերը, տարեցները, հաշմանդամություն ունեցող անձինք, երեխաները, մասնավորապես այդ աշխատանքներին ներգրավված են ակտիվ հասարակական կազմակերպություններ: Շատ աշխատանքների նման նվազ թվի վրա իր ազդեցությունն է ունեցել ներկա՝ կլորոնավիրուսի պայմաններում կյանքը և աշխատանքները:

2020թ. զբաղվածության արդյունավետությունը բարձրացնելու, գործազուրկների և աշխատանք փնտրողների համար աշխատանքի հնարավորությունները մեծացնելու նպատակով ՀՀ կառավարությունը կշարունակի իր նպատակամետ քաղաքականությունը: 2020թ. համար պետությունը նախատեսել է ՀՀ Լոռու մարզի 13 համայնքներում իրականացնել Վարձատրվող հասարակական թվով 14 աշխատանքներ /Տաշիր համայնքի բնակավայրերում՝ 2 ծրագիր/: Պետք է արժանին մատուցել Armenian Tree Project հիմնադրամին, որ համագործակցելով ՀՀ Լոռու մարզպետարանի հետ ներկայիս խնդիրների լուծման նպատակով առաջարկեց անտառածածկույթի խնամք, ծառերի բնաբաժակի խոտածածկի մաքրման թվով երեք ծրագրեր՝ Տաշիրի տարածաշրջանի Տաշիր և Մեծավան համայնքներում: 01.07.2020թ. դրությամբ ավարտվել են թվով 5 համայնքներում՝ մեկական ծրագրեր, դրանք են՝ «Անտառամուտ համայնքի ակումբի շենքի վերանորոգման աշխատանք-ներ», «Եղեգնուտ համայնքի գյուղամիջյան հուշաղբյուրի վերանորոգման, խաղահրապարակի վերակառուցման, տաղավարի կառուցման և տարածքի բարեկարգման աշխատանքներ», «Դարպաս համայնքի գերեզմանատան ցանկապատում, տարածքի բարեկարգում», «Ձորագետ համայնքի խաղահրապարակի վերանորոգման, բարեկարգման և հարակից տարածքների բարեկարգման աշխատանքներ», «Սարալանջի խաղահրապարակի կառուցում և ցանկապատում» ծրագրերն են: Անբավարար ընթացքի պատճառով դադարեցվեց 04.05.2020թ.-ից մեկնարկած «Հարթագյուղ համայնքի Սուրբ Հովհաննես տանող

ճանապարհի խճալցում և բարեկարգում» ծրագիրը, որի փոխարեն 01.07.2020թ.-ից կսկսվի «Շենավան համայնքի մանկական խաղահրապարակի կառուցում և ցանկապատում» ծրագիրը: Բոլոր ծրագրերը հաջողությամբ ավարտվել են: Պետության կողմից այդ ծրագրերի իրականացման համար տրամադրվել է 20.697 մլն դրամ:

ՄԶՈ առաջարկվել է նաև տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրների լուծմանն ուղղված քաղաքային համայնքների մշակութային և սպորտային կենտրոններում թեքահարթակների կառուցումը: Թեքահարթակների առկայությունն այսօր գրեթե բոլոր պետական և հասարակական նշանակության կազմակերպություններում իրողություն է, սակայն դրանք կարիք ունեն համակարգված գնահատման ինչպես որակական, այնպես էլ կիրառելիության տեսանկյունից:

Ելնելով ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության թիրախավորված տարեկան միջոցառումների ծրագրից 2020թ. ամբողջությամբ կփոխհատուցվի հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար հնարավորությունների ապահովման հարցում վերականգնողական սարքերի և պարագաների տրամադրումը՝ հավաստագրային եղանակով: Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տվյալների՝ պետության միջոցներով ապահովվել են բոլոր շահառուները /ՀՀ-ում 2020թ. տվյալները՝ 5.943 անձի տրամադրվել է 12.518 աջակցող միջոց, գումարային տվյալներ չեն տրամադրվել/:

Կարևոր նշանակություն ունի զոհված կամ հաշմանդամ դարձած զինծառայողների, ինչպես նաև փախստականների ընտանիքների բնակարանային ապահովման ծրագրերը: 2020թ. ՀՀ Լոռու մարզի համայնքների կողմից հաշվառվել են մեկ զոհվածի և երկու հաշմանդամություն ունեցող զինծառայողների ընտանիքների բնակարանային գործեր, որոնք 2020թ. հուլիսին սահմանված ընթացակարգով կուղարկվի ՀՀ պաշտպանության նախարարություն: Վերջինիս կողմից 2020թ. ընթացքում դրական եզրակացություն է տրվել զոհված զինծառայողի երեք ընտանիքների /Գևորգ Կոծինյան, Սամվել Գասպարյան՝ 4.117.000-ական դրամ, Սևակ Ասլիկյան՝ 7.679.000 դրամի չափով/:

Անդրադառնալով երեխաների իրավունքների պաշտպանության խնդիրների լուծմանը պետք է նշել, որ շարունակվել են ծրագրային աշխատանքների իրականացումը, որոնց տվյալները բերված են աղյուսակում:

Որակյալ սոցիալական ծառայություններ մատուցելու նախապայման է բնագավառում ներգրավված սոցիալական աշխատանքի մասնագետների մասնագիտական հմտությունների շարունակական կրթությունը:

<<Աստղիկ>> ԲՀ-ի կողմից մարզում իրականացվել են շուրջ 108.8 մլն դրամի սոցիալական ծրագրեր:

ՎՎՀ- ի կողմից իրականացվել են 77,7 մլն դրամի սոցիալական ծրագրեր:

Ընդհանուր առմամբ սոցիալական բնագավառում 2020թ.-ին ներդրումների ընդհանուր ծավալը կազմել է 5,4 մլրդ դրամ:

5. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ

5.1 Տրանսպորտ և ճանապարհաշինություն

Համաձայն ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 13-ի N265-Ն որոշման, Լոռու մարզում ավտոմոբիլային ճանապարհների ցանցը կազմում է 878.0կմ, այդ թվում ըստ նշանակության՝

- *միջպետական* *216.2 կմ*
- *հանրապետական* *262.7 կմ*
- *մարզային (տեղական)* *399.1 կմ*

Մարզում կան

- *կամուրջ և կամրջային անցում* *175 հատ*
- *ավտոմոբիլային թունել* *5 հատ*

Մարզով անցնող միջպետական նշանակության ավտոճանապարհները կազմում են Հայաստանի Հանրապետության միջպետական ավտոճանապարհային ցանցի 12.4 %-ը: Ներկայումս ընթացքի մեջ են Մ-6՝ Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի վերականգնման և բարելավման ծրագրի 2-րդ փուլով նախատեսված աշխատանքները (ավարտը նախատեսված է 2020թ վերջին):

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության և Լոռու մարզպետարանի կողմից ՀՀ պետական բյուջեի և այլ վարկային միջոցներով 2020 թվականին ՀՀ Լոռու մարզում նախատեսվում էր շուրջ 14.0 մլրդ դրամի աշխատանք, որից փաստացի իրականացվել է 10,3 մլրդ դրամը:

Պետբյուջեի սեփական միջոցներով իրականացվելու են 5,2մլն դրամի աշխատանքներ, այդ թվում ՝

- Մ-3, Մ-7, Մ-8 միջպետական նշանակության ճանապարհահների հիմնանորոգում, ընդհանուր երկարությունը՝ 46.7կմ;
- Հ-25, Հ-31, Հ-34 հանրապետական նշանակության ճանապարհահների հիմնանորոգում, ընդհանուր երկարությունը՝ 28կմ;
- Տ-5-57, /Հ-33/ (Լոռի Բերդ) – Լեջան - /Հ-33/ մարզային (տեղական) նշանակության ճանապարհի հիմանորոգում: Հիմնանորոգվող հատվածի երկարությունը՝ 3.8 կմ:
- Մարզային նշանակության ա/ճանապարհների պահպանում և շահագործում: Սպասարկվող ճանապարհների երկարություն՝ 76կմ:

Պետական վարկային միջոցներով՝

- Մ6՝ Վանաձոր- Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ38+450 - կմ90+191 հատվածի վերականգնման և բարելավման աշխատանքներ՝ 8 353.7 մլն դրամ
- Մ6-Եղեգնուտ-Դեբեդ 8.3կմ երկարությամբ ճանապարհային հատվածի հիմնանորոգում, արժեքը կճշտվի մրցութային գործընթացն ավարտելուց հետո:
- Տ-5-32-Կաթնաջուր 4.6կմ երկարությամբ ճանապարհային հատվածի հիմնանորոգում, արժեքը կճշտվի մրցութային գործընթացն ավարտելուց հետո:

Մարզում ներհամայնքային ճանապարհների վերանորոգման աշխատանքներ կիրականացվեն նաեւ համայնքներին պետ. բյուջեից տրամադրվող և համայնքների համաֆինանսավորմամբ իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում: Սուբվենցիոն ծրագրերով նախատեսված ճանապարհաշինական ծրագրերի ընդհանուր արժեքը կազմում է 1,57մլրդ դրամ, որից պետ. բյուջեի ֆինանսավորմամբ՝ 632,8.մլն դրամ, համայնքների ներդրման չափը՝ 499.8 մլն դրամ:

Ուղևորահոսքի սակավության պատճառով մարզի հինգ փոքր համայնքներից կանոնավոր ուղևորափոխադրումներ չեն իրականացվում: Այդ համայնքներից ուղևորափոխադրումներն իրականացվում են սեփական և տաքսի ծառայության ավտոմեքենաներով:

Համաձայն Հայաստանի Հանրապետությունում միասնական երթուղային ցանցի ստեղծման տեխնիկական առաջադրանքի՝ նախատեսվում է մարզի խոշոր քաղաքներից կամ մարզկենտրոնից դեպի Երևան, կամ այլ մարզի խոշոր քաղաքներ և դրա հետ միասին տվյալ խոշոր քաղաքը կամ մարզկենտրոնը իրեն հարող բոլոր բնակավայրերին կապող երթուղիների սպասարկման համար հայտարարել մրցույթներ մեկ փաթեթով: Արդյունքում հնարավոր կլինի ընտրել մեկ փոխադրող, որը կսպասարկի մարզի ինչպես շահութաբեր, այնպես էլ ոչ շահութաբեր երթուղիները ամբողջովին:

5.2 Խմելու ջրամատակարարում և ջրահեռացում

Մարզի բնակչությանը կայուն, մատչելի և որակյալ խմելու ջրամատակարարման բարելավումը ոլորտի զարգացման նպատակներից է: Մարզի համայնքների շուրջ 65-70%-ում գործում է շուրջօրյա ջրամատակարարում:

ՄԶՌ-ի ոլորտի հիմնախնդիր է հանդիսանում ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի մաշվածությունը: Ջրամատակարարման խնդիր ունի մարզի բնակչության 2.1%-ը, իսկ ջրահեռացման խնդիր ունեցող՝ բազմաբնակարան շենքերում ապրող բնակիչները կազմում են մարզի բնակչության 3.0%-ը:

2020թվականին Լոռու մարզում ջրամատակարարման և ջրահեռացման ոլորտում նախատեսված 5,20 մլն դրամի աշխատանքներից իրականացվել է 1,13 մլն դրամի աշխատանքներ:

ՀՀ Լոռու մարզում Հայ-Գերմանական համագործակցության ծրագրի շրջանակներում KFW բանկի ֆինանսավորմամբ նախատեսված են՝ Վանաձորի 8-րդ ճնշումային գոտու բաշխիչ ցանցի վերակառուցման, իսկ Ամրակից, Անտառամուտ, Ձորագյուղ, Գուգարք, Հոբարձի, Վարդաբլուր, Կուրթան, Լեռնապատ, Վահագնի համայնքներում բաշխիչ ցանցերի, ՕԿՋ-ների և 3 գետային ջրընդունիչների վերակառուցման աշխատանքները 4 201 090 ՀՀ դրամով:

ՀՀ պետական բյուջեով (ՀՏՋՀ) իրականացվել են խմելու ջրագծերի կառուցման, վերանորոգման և բարեկարգման այլ աշխատանքներ հազար դրամով:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ ՊԿԱԾ ծրագրի շրջանակներում 2020թ. նախատեսված 566, 200.0 դրամի աշխատանքներից իրականացվել են 143,803.4 հազար դրամի աշխատանքներ:

Մարզի թվով 17 համայնքում սեփական միջոցներով նախատեսված 105.822.12 հազար դրամի ջրամատակարարման համակարգերի վերանորոգման աշխատանքներից իրականացվել են 67,192.0 հազար դրամի աշխատանքներ:

ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի Լոռու ջրանցք և Գետիկ տեղամասերում մարզի 21 համայնքում նախատեսվել և իրականացվել են նորոգման և վերականգնման աշխատանքներ՝ 12 789.93 ՀՀ դրամ արժեքով:

Սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում մարզի 7 համայնքներում իրականացվել են խմելու, ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի կառուցում 126,2 մլն դրամ արժողությամբ և 4 համայնքներում ոռոգման համակարգի կառուցում 72,1 մլն դրամ արժողությամբ:

5.3 Գազամատակարարում (գազիֆիկացում)

Լոռու մարզն ունի 56 համայնք, որից 7 քաղաքային բնակավար ունեցող եւ 49 բացառապես գյուղական բնակավայրերից կազմված համայնքներ: 01.01.2021թ. դրությամբ մարզում առկա է գազաֆիկացված 51 (91.0%) եւ չգազաֆիկացված 5 (9.0%) համայնք: Գազաֆիկացված 8 համայնքներում գազաֆիկացված չէ նաև 25 բնակավայր:

2020թ.-ին ոլորտում իրականացվել են Գուգարք, Ալավերդի, Արևածագ, Այգեհատ, Գյուլագարակ, Օձուն և Լեռնահովիտ համայնքները սնող միջին և ցածր ճնշման ստորգետնյա գազատարերի և մեկուսիչ ծածկույթի նորոգման, Կարմիր Կամուրջ-Ալավերդի Dպ700 մայրուղային գազատարի և թվով 2 ՊԳԳԿ-ների կապիտալ նորոգման, բնական գազի կենցաղային հաշվիչների, պաշտպանիչ արկղերի, վթարային անջատիչ կափույրների ու ազդանշանային սարքերի տեղադրման աշխատանքներ:

Ախթալա համայնքի բյուջեից ֆինանսավորվել է Շամլուղ, Նեղոց բնակավայրերի, Առափնյա և Երկաթուղայիներ թաղամասերի գազատարերը բարձր ճնշման գազատարին միացման համար:

Գուգարք համայնքի բյուջեի միջոցներով իրականացվել է նախկին ամբուլատորիայի շենքի գազաֆիկացումը:

Թումանյան համայնքի բյուջեի միջոցներով իրականացվել է Քարինջ, Լորուտ բնակավայրերի ՆՈՒՀ-երի և Մարց բնակավայրի հանդիսությունների սրահի գազաֆիկացման աշխատանքները:

Գյուլագարակ համայնքի բյուջեի միջոցներով իրականացվել է Գերմանական թաղամասի գազաֆիկացման նախագծանախահաշվային աշխատանքները:

2020թ.-ին գազամատակարարման ոլորտում իրականացվել է 450,4 մլն. դրամի աշխատանքներ, որից սուբվենցիոն ծրագրերի շրջանակում մարզի Շնող և Չկալով համայնքներում իրականացվել են գազաֆիկացման աշխատանքներ 21,4 մլն դրամ արժողությամբ:

5.4 Էներգետիկա

Մարզի բոլոր բնակավայրերը միացված են էլեկտրական ցանցերին և ապահովված են հիմնականում անխափան և առանց լուրջ վթարների էլեկտրամատակարարմամբ:
2020թ.-ին մարզում ներդրումների ծավալը 1,7մլն դրամ է:

Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի (ՎԶՄԲ) աջակցությամբ կիրականացվեն «Վանաձոր-1» 110/10/6 կՎ ենթակայանի վերակառուցման և «Լալվար-Նոյեմբերյան» 110 կՎ օդային գծերի վերակառուցման աշխատանքներ 163,382.50 հազ. դրամ ներդրմամբ:

❖ «ՀԷՑ» ՓԲԸ-ի ներդրումային ծրագրով իրականացվել են օդային և մալուխային գծերի վերակառուցման և այլ աշխատանքներ 1,178,746.80 հազ.դրամ ներդրմամբ:

❖ <<Աստղիկ>> ԲՀ-ի 9,328.0 հազ. դրամ ֆինանսավորմամբ ՀՀ Լոռու մարզի Կուրթան բնակավայրում տեղադրվել են Արևային ջրատաքացուցիչներ:

❖ Բազում, Գյուլագարակ, Ծաղկաբեր, Շնող, Սարահարթ, Լերմոնտովո, Ձորագյուղ, Ջրաշեն, Ստեփանավան համայնքների 21,500.0 հազ. դրամ ֆինանսավորմամբ իրականացվել են փողոցային լուսավորության ցանցերի կառուցման աշխատանքներ:

❖ Վերականգնվող էերգետիկայի և էներգախնայողության հիմնադրամի 9,506.2 հազ. դրամ ֆինանսավորմամբ ՀՀ Լոռու մարզի Օձուն(2), Կաթնաջուր և Մեծ Պարնի համայնքներում տեղադրվել են թվով 4 արևային ֆոտովոլտային կայաններ:

Սուբվենցիոն ծրագրերի շրջանակնում մարզի 20 համայնքներում իրականացվել են

լուսավորության համակարգի կառուցում, ֆոտովոլտային կայանների տեղադրում 306,0 մլն դրամ արժողությամբ:

6.ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Մարզի քաղաքաշինության ոլորտի հիմնախնդիրները կապված են բնակավայրերի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման, հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքերի սեյսմակայունության բարձրացման և վերանորոգման, առողջապահական օբյեկտների կառուցման և վերանորոգման և համապատասխանեցման ժամանակակից պահանջներին, էներգախնայողության համակարգերի տեղադրման, մշակութային, նախադպրոցական, մարզական օբյեկտների, բազմաբնակարան շենքերի հիմնանորոգման, 3-րդ աստիճանի վթարայնություն ունեցող բազմաբնակարան բնակելի շենքերի ամրացման, բազմաբնակարան շենքերի վնասվածության աստիճանի որոշման նպատակով հետազննումների անցկացման, բնակավայրերի բարեկարգման, բազմաբնակարան շենքերի կառավարման գործին պետական աջակցության, քաղաքաշինության ոլորտի գործընթացի հստակեցման, իրավասու մարմինների վարչարարության, թույլտվությունների, եզրակացությունների տրամադրաման պարզեցման, ինչպես նաև քաղաքաշինական այլ խնդիրների հետ:

Մարզում հիմնախնդիր է մնացել աղետի գոտու գյուղական բնակավայրերում անօթևան մնացած 278 ընտանիքի բնակարանով ապահովման հարցը:

Քաղաքաշինության ոլորտի զարգացման նպատակներն են 3-րդ աստիճանի վթարայնություն ունեցող բազմաբնակարան բնակելի շենքերի ամրացումը, բազմաբնակարան բնակարանային ֆոնդի վերականգնումը, բակերի բարեկարգումը, կոմունալ ենթակառուցվածքների վերանորոգումը, միավորված համայնքների համակցված գլխավոր հատակագծերի և շինարարական օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը:

19 դեկտեմբերի 2019 թվականի N 1855-Ն որոշմամբ Լոռու մարզպետարանին հատկացվել է 27,5 մլն դրամ՝ 2015 թվականին Գուգարք համայնքում հրդեհից տուժած 7 ընտանիքների բնակարանային խնդիրները լուծելու համար: Շահառու ընտանիքներին տրամադրվել են ԲԳՎ- ներ, ծրագիրն ավարտվել է 2020 թվականի հուլիսի 1-ին:

ՀՀ կառավարության 07.05.2020թ. թիվ 712-Ն որոշմամբ Լոռու մարզպետարանին հատկացվել է 2,23 մլրդ դրամ, որից՝

- ✓ 2,18 մլրդ դրամը ՀՀ Լոռու մարզի գյուղական բնակավայրերում ծրագրի շահառու ճանաչված 153 ընտանիքի համար բնակելի տների կառուցման նպատակով (2,1 մլրդ

դրամը բուն շինարարական, իսկ 1,98 մլն դրամը արդեն շինարարությունն ավարտված բնակելի տների չափագրման աշխատանքների համար):

- ✓ 324.0 հազար դրամը սույն որոշման 6-րդ կետով նախատեսված նոտարների դեպոզիտ հաշիվների սպասարկման նպատակով նոտարներին փոխանցելու համար:
- ✓ 49,0 մլն դրամը՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ քաղաքում և գյուղական բնակավայրերում ծրագրի շահառու ճանաչված 9 ընտանիքի բնակարանի գնման վկայագրի միջոցով բնակարան (բնակելի տուն) ձեռք բերելու նպատակով ֆինանսական աջակցության տրամադրման համար,
- ✓ 152 շահառու ընտանիքից 144-ի հետ «Ֆուլեր տնաշինական կենտրոն» բարեգործական կազմակերպությունը կնքել է պայմանագրեր և աշխատանքները սկսված են: Մնացած 8 ընտանիքի հետ պարզվում են նախագծերի և թերի փաստաթղթերի նեկայացման հարցերը:

7.ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

7.1Տարածքային կառավարում

ՀՀ պետական բյուջեից 2020թ. մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերի և ենթակա կրթական և մշակութային ՊՈԱԿ-ներին նախատեսված և փաստացի ծախսված վերաբերյալ.

/հազ. դրամ/

	2020թ. նախատեսված	2020թ. փաստացի	2020թ.-ի 1-ին նախատեսվածի և փաստացի տարբերությունն /տնտեսում/	2020թ.-ի փաստացին նախատեսվածը նկատմամբ /տոկոս/
ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի պահպանում	655586.4	634271.6	21314.8	98.4
Պետական ոչ առևտրային կազմակերպություններին հատկացված գումար, որից՝	7913821.4	7788557.9	125263.5	98.4
ա/կրթության ոլորտ	7894170.0	7768906.5	125263.5	98.4

բ/մշակույթի ոլորտ	19651.4	19651.4	0	100

Ծախսերի արդյունավետ իրականացման և ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործման արդյունքում 2020 թվականին մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերի գծով առաջացել է 21314.8 հազ. դրամ տնտեսում: Կրթության ոլորտում տնտեսումը կազմել է 125263.5 հազ. դրամ:

Մարզում 2020թ. ապահովել են հետևյալ արդյունքները.

- օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացում,
- մարզպետի աշխատակազմի աշխատատեղերի կահավորում և տեխնիկական հագեցում,
- համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից սուբվենցիաների տրամադրման գործընթացի շարունակում,
- մարզպետի աշխատակազմի տեղեկատվական, կառուցվածքային կառավարչական գործառույթների բարելավում,
- մարզպետի աշխատակազմի, ՏԻՄ-երի և ՀԳՄ տարածքային ստորաբաժանումների փոխհարաբերությունների սերտացում,
- մարզպետի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վերապատրաստումների շարունակում,
- մարզպետի կողմից իրականացնել իրավական և մասնագիտական վերահսկողություն տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորությունների իրականացման նկատմամբ,
- մարզպետի աշխատակազմի և համայնքապետարանների մասնագետների, մարզային ռազմավարության իրականացման սուբյեկտների շարունակական մասնագիտական վերապատրաստումների իրականացում,
- մարզպետի աշխատակազմի աջակցությամբ կամ ուղղակի գործողություններով մարզում կատարված ներդրումների ծավալի ավելացումը,
- մարզպետարանի և ՏԻՄ-երի, մասնավոր հատվածի միջև համագործակցության մակարդակի բարձրացումը:

7.2 Տեղական ինքնակառավարում

Լոռու մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները 2019թ. համար նախատեսվել էր 2,439,041.9 հազ. դրամ, փաստացի կատարումը կազմել է 2,525,210.2 հազ. դրամ, իսկ 2020թ. համար տարեսկզբին նախատեսվել է 2,629,129.8 հազ. դրամ, որի աճը 2019թ. պլանի նկատմամբ նախատեսվել է 7,8% աճ, իսկ 2019թ. փաստացիի նկատմամբ 4.1% աճ և ընդամենը եկամուտների մեջ սեփական եկամուտների տեսակարար կշիռը նախատեսվել է 31.0%: 2020թ. Տարեկան կտրվածքով համայնքների բյուջեների սեփական եկամուտների փաստացի հավաքագրումը կազմել է **2,312,617.6** հազ. դրամ, և ընդամենը եկամուտների մեջ սեփական եկամուտների տեսակարար կշիռը կազմել է 22.6%:

- 2020թ. տեղական ինքնակառավարման ոլորտի առաջնահերթություններն են.
- վարչատարածքային բարեփոխումների շարունակումը,
- տեղական ինքնակառավարման մարմինների, համայնքապետարանների աշխատակազմերի տեխնիկական և մասնագիտական հմտությունների զարգացումը,
- համայնքների զարգացման ծրագրերի մարզային զարգացման ռազմավարությանը համապատասխանեցման շարունակումը.
- տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների որակից բնակչության բավարարվածության աստիճանի բարձրացումը,
- համայնքների բյուջեների սեփական եկամուտների աճի ապահովումը նախորդ տարվա համեմատ,
- համայնքապետարանների աշխատակազմերի գործունեության արդյունավետության բարձրացում, մատուցվող ծառայությունների որակի բարելավումը,
- համայնքների զարգացման գործընթացներում քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովումը,
- աղբահանության և սանիտարական մաքրման ծառայությունների որակի բարելավումը և հասանելիության ապահովումը:

7.3 Քաղաքացիական հասարակություն

Մարզում գործող ՀԿ-ների և ԶԼՄ-ների ներգրավում հրապարակայնության ապահովման գործընթացներում

Համայնքային գործառույթների հրապարակայնության ու հաշվետվողականության ասպարեզում քաղաքացիական ակտիվությունը բարձրացնելու նպատակով համավարակով պայմանավորված և պատերազմական իրավիճակներից ելնելով առցանց եղանակով՝ թվով մեկ քննարկում է կազմակերպվել մարզի մի քանի հկ-ների, մեկ քննարկում՝ մարզի քաղաքային համայնքների տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձ հանդիսացող պաշտոնայների մասնակցությամբ:

Մարզում գործող ԶԼՄ-ների և հասարակական կազմակերպությունների հետ անհրաժեշտ համագործակցության կազմակերպման նպատակով՝ հանրային իրազեկման աշխատանքներն առավել արդյունավետ դարձնելու նկատառումներով մարզային և հանրապետական զանգվածային լրատվամիջոցներով լուսաբանվել են մարզպետարանի աշխատակազմի գործունեությանը վերաբերող իրադարձությունները, նիստերը, հանրային հնչեղության բանակցությունները, խորհրդակցությունները:

Մարզպետարանի աշխատակազմի գործունեությունը, իրադարձային միջոցառումները, մարզպետարանի և համայնքների կողմից ներկայացվող հաշվետվությունները առավել ինտենսիվ կերպով են լուսաբանվել տեղական և հանրային լրատվամիջոցներով և մարզպետարանի պաշտոնական կայքէջում, ֆեյսբուքյան և յութուբյան էջերում: Մարզի բոլոր ԶԼՄ-ներին և հասարակական կազմակերպություններին(ըստ անհրաժեշտության) տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվություն Լոռու մարզպետարանի և նրա կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության, ծրագրերի, կազմակերպվող միջոցառումների մասին: ԶԼՄ-ների ներկայացուցիչներին տրամադրվել են մամլո հաղորդագրություններ, սահմանված կարգով կատարվել լրագրողների հավատարմագրում:

Երկրորդ կիսամյակում բաժնի կողմից կազմվել է ավելի քան 500 տեղեկատվական նյութ, 120 տեսանյութ:

Մարզային և հանրապետական լրատվամիջոցներով ևս անդրադարձ է կատարվել մարզպետարանի գործունեությանը՝ ավելի քան 100 հրապարակում:

ԶԼՄ-ների և մարզպետարանի ֆեյսբուքյան էջի միջոցով 2020թ. երկրորդ կիսամյակում ևս պարբերաբար հասարակական կարծիքի ուսումնասիրություն է կատարվել: Արդյունքում վեր են հանվել ինչպես մարզպետարանի գործունեության հետ կապված քաղաքացիների դիտարկումները, այնպես էլ՝ քաղաքացիների խնդիրները, մտահոգությունները, դժգոհությունները՝ տարբեր ոլորտների գործունեության վերաբերյալ: Դրանք ներկայացվել են մարզպետի և մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների ուշադրությանը՝ լուծման ակնկալիքով:

2020թ. երկրորդ կիսամյակում տեղի է ունեցել մարզպետի շուրջ 50 հարցազրույց և ճեպազրույց:

Մարզային ՀԿ-ների հետ համատեղ աշխատանքի պլանավորում, փոխհամագործակցության մեխանիզմների մշակում և իրականացում

Մարզում ակտիվորեն գործող շուրջ 30 հասարակական կազմակերպություններ՝ այդ թվում և ազգային փոքրամասնություններին պատկանող, ակտիվ համագործակցում են

մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների հետ, որոշ ՀԿ-ներ ընդգրկված են մարզպետարանի «Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային», «Լոռու մարզպետարանի գենդերային հարցերով զբաղվող մշտական գործող» հանձնաժողովների կազմերում: Պատերազմական առաջին իսկ օրերից առաջնագծի զինվորներին և մարզում ապաստան գտած արցախցիներին աջակցելու նպատակով Լոռու մարզպետարանում նաև ձևավորվել է մարզային համակարգման կենտրոն, որի կազմում ընդգրկվել են հասարակական կազմակերպությունների, քաղհասարակության ակտիվ ներկայացուցիչներ:

ՀԿ ներկայացուցիչները(այդ թվում նաև՝ ազգային փոքրամասնությունները ներկայացնող ՀԿ-ների) հրավիրվել են մարզպետարանում տեղի ունեցող կամ մարզպետարանի կողմից կազմակերպվող միջոցառումներին, մարզպետարանի պաշտոնյաները ևս հրավիրվել և մասնակցություն են ունեցել ՀԿ-ների ու միջազգային կազմակերպությունների կողմից կազմակերպված միջոցառումներին, նրանց կարծիքներն ու առաջարկությունները կարևորվել են տարբեր որոշումների ընդունման ժամանակ: Հասարակական կազմակերպությունների հետ ակտիվորեն համագործակցում են նաև մարզի համայնքները՝ իրականացնելով տարաբնույթ ծրագրեր: Երկրորդ կիսամյակում մարզի համայնքներում հասարակական կազմակերպությունների հետ իրականացվել է շուրջ 20 ծրագիր:

Մարզի համայնքներում շարունակական կերպով դիտարկվել են հանրային իրազեկման միջոցառումները:

7.4 Արտակարգ իրավիճակների բնակչության եւ տարածքների պաշտպանություն

Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտում 2020 թվականին 2 իրականացվել են հետևյալ հիմնական միջոցառումները՝

- 2020 թվականի ընթացքում հաստատվել է Չկալով համայնքի հնգամյա զարգացման նոր ծրագիրը, որում աղետների ռիսկերի նվազեցման բաղադրիչներ ներառված չեն: Դեբետ, Ֆիոլետովո, Գուգարք, Կաթնաջուր և Լեռնանցք համայնքների զարգացման ծրագրերում կատարվել են լրացումներ՝ ներառվել են աղետների ռիսկերի նվազեցման բաղադրիչներ:
- Պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների պատրաստվածության բարձրացման նպատակով 2020 թվականի 2-րդ կիսամյակում պլանավորված ուսումնավարժությունների անցկացումը Covid-19 համավարակի և ռազմական դրության հետ կապված կասեցվել է,
- Մարզի 56 համայնքներից 15 համայնքներում ՀՀ ԱԻՆ ՓԾ Լոռու մարզային վարչության աջակցությամբ իրականացվել է ազդարարման սարքավորումների վերանորոգման և ձեռքբերման աշխատանքներ, որի արդյունքում 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ մարզում առկա են 55 գործող ազդարարման սարքավորումներ:

8.Ֆինանսավորում

Լոռու մարզի 2020թ.-ի գործունեության ծրագրի ընդհանուր ֆինանսավորումը կազմում է 40,76 մլրդ. դրամ, որից

	Ընդամենը	**54,985,431.2**	***40,761,644.2***
	որից՝		
1	**ՀՀ պետական բյուջե, այդ թվում՝**	**46,025,197.7**	**36,137,750.4**
	սեփական միջոցներ	***33,025,529.1***	***31,303,532.9***
	վարկային միջոցներ	***12,999,668.6***	***4,834,217.5***
2	**Միջազգային կազմակերպություններ և դոնորներ**	**1,174,813.0**	**611,181.6**
3	**Համայնքային բյուջե**	**1,783,296.9**	**1,325,836.6**
4	**Մասնավոր ներդրողներ**	**5,178,123.6**	**2,561,961.7**
5	**Այլ աղբյուրներ**	**824,000.0**	**124,914.0**